ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին Կառավարությունն ընդլայնեց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի շրջանակներում կրթության գծով սոցիալական կրեդիտները, մասնավորապես՝ ներառելով արվեստի և մարզադպրոցները, ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, այդ թվում՝ մեծահասակների համար: Սա էապես խթանեց ոչ ֆորմալ կրթության միջավայրը. եթե նախկինում մեկ տարվա ընթացքում երաշխավորման էր ներկայացվում ոչ ֆորմալ կրթության առավելագույնը շուրջ 50 ծրագիր, ապա այս որոշումից հետո երաշխավորվել են շուրջ 800 ծրագրեր, ավելի քան տասը անգամ ավել, քան նախկինում մեկ տարում: Հազարավոր մարդիկ օգտվում են ստեղծված հնարավորությունից, ինչն էլ դառնում է մեծահասակների և ոչ ֆորմալ կրթության զարգացման գործուն մեխանիզմ՝ միաժամանակ սովորելը վերածելով տարածված և ընդունված վարքականոնի:

Հանրակրթություն

2025 թվականին Կառավարությունը հստակեցրեց և տեսանելի դարձրեց կրթության ռազմավարության կարգախոսը՝ լավ սովորիր, որ լավ ապրես: Լավ սովորելն ընդգծում է կրթության միջոցով անձի մրցունակության բարձրացումը, իսկ լավ ապրելը ցույց տալիս դրա բազմաբաղադրիչ լինելը՝ ոչ միայն սեփական բարեկեցության, այլև միջավայրի, համայնքի, երկրի բարեկեցության համատեքստում:

2025 թվականին նույնպես Կառավարության ջանքերն ուղղված էին լավ սովորելու հնարավորությունների ընդլայնմանն ու հասանելիության ապահովմանը բոլորի համար, ինչը հանրակրթության ոլորտում դրսևորվում էր մի շարք բարեփոխումների շարունակականությամբ:

300 դպրոց, 500 մանկապարտեզ մեծածավալ ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել ավելի քան 320 դպրոցում և ավելի քան 490 նախադպրոցական հաստատությունում: 2025 թվականի տարեվերջի դրությամբ աշխատանքներն ավարտվել են ավելի քան 100 դպրոցներում և շուրջ 280 մանկապարտեզներում ու նախակրթարաններում: Ընդ որում, որակի տեսանելի բարելավմանը զուգընթաց էապես աճել է ծրագրի իրականացման տեմպը. եթե 2024 թվականին այս ուղղությամբ կատարողականը կազմել էր շուրջ 53,8 մլրդ ՀՀ դրամ, ապա 2025 թվականի ցուցանիշը շուրջ 121 մլրդ դրամ է՝ նախորդ տարվանից 66 մլրդ-ով կամ 123%-ով ավելի: Բոլոր ավարտված և շահագործված ուսումնական հաստատություններն ապահովվում են նոր գույքով:

Գյուղական բնակավայրերում կառուցվում են 59 կրթահամալիրներ, որոնք գործելու են որպես համայնքային կենտրոններ: Կրթահամալիրների ամբողջական գործարկումը նախատեսում է նաև դեպի կրթահամալիր տանող ճանապարհների բարեկարգում, նոր տրանսպորտային միջոցների ձեռքբերում՝ երեխաների անվտանգ տեղափոխումը

իրականացնելու համար: Այս նպատակով Կառավարությունը սահմանել է տրանսպորտային միջոցների ձեռքբերման առանձնահատկություններ: Գնման գործընթացը մեկնարկել է, զուգահեռաբար բարեկարգվում են ճանապարհները:

2025 թվականի տարեվերջի դրությամբ հանրապետության դպրոցների շուրջ 70 տոկոսը կամ շուրջ 800 դպրոցներ ապահովված են ժամանակակից բնագիտական («Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաներ) և ինժեներական («Ինֆորմատիկա» առարկա) լաբորատորիաներով: 2026 թվականին լաբորատորիաներով հագեցման ծրագիրը կամփոփվի բոլոր դպրոցներում: Ձևավորված նոր միջավայրն էապես փոխել է երեխաների հետաքրքրվածությունն ու սովորելու արդյունավետությունը:

2025 թվականին շարունակվել է հանրակրթության ֆինանսավորման էական աճը՝ հիմքում ունենալով հանրակրթության նոր չափորոշչի իրականացումը և ստեղծելով ամուր նախադրյալներ որակյալ կրթության ապահովման համար. այսպես, միայն դպրոցների պահպանման ծախսերին հատկացվել է շուրջ 128,8 միլիարդ ՀՀ դրամ, ինչը 2018 թվականի նկատմամբ ավել է շուրջ 56.9%-ով: Այս ֆինանսավորումը հնարավոր է դարձնում անհատականացված դասացուցակը ավագ դասարաններում՝ ապահովելով մասնագիտական կողմնորոշումը, երկարօրյա ուսուցումը ցածր առաջադիմությամբ երեխաների համար, բազմազան խմբակների և նախագծային աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ուսուցչի մանկավարժական համարժեք ծանրաբեռնվածությունը՝ շաբաթական 22 դասաժամի փոխարեն 18 դասաժամ տարրական օղակում և 20 դասաժամ միջին և ավագ օղակում:

Հանրակրթության նոր չափորոշիչը 2025 թվականի սեպտեմբերից ներդրվել է ՀՀ բոլոր դպրոցների 1-11-րդ դասարաններում: Առաջին փուլի արդյունքներով զուգահեռաբար ընթացել են նաև չափորոշչի կատարելագործման աշխատանքները: Հայաստանն առաջին անգամ մասնակցել է միջազգային PISA հետազոտությանը, որի արդյունքները կհրապարակվեն 2026 թվականին՝ հանդիսանալով սկզբնական տվյալներ չափորոշչի հետագա արդյունավետության գնահատման համար:

Չափորոշչի ներդրմանը համընթաց ստեղծվել են նոր դասագրքեր, մշակվել է ուսումնական նոր բովանդակություն: 2023-2025 թվականներին ընդհանուր առմամբ ստեղծվել է 158 անուն /227 օրինակ/ դասագիրք, ինչը լուրջ նախադրյալ է որակյալ դասագրքաստեղծ միջավայր ձևավորելու համար: Մրցակցային ընթացակարգերի արդյունքում մեկ դասագրքի արժեքը միջինում նվազել է 23-26%-ով: Ընդ որում, եկամուտների համընդհանուր հայտարարագրման շրջանակներում նաև ամրագրվել է 5-12-րդ դասարաններում սովորողների ծնողների համար դասագրքերի վարձավճարների դիմաց տարեկան 3000 դրամ սոցիալական կրեդիտի ճանաչում և հետվերադարձ, որի շահառու են ավելի քան 300 հազար երեխաներ: Հաշվի առնելով նաև դասագրքերի՝ ըստ դասարանների վարձավճարների տարեկան չափերի նվազումը նոր մրցակցային ընթացակարգերով, այս հանգամանքը վարձավճարը նվազեցնում է աշխատող ծնողի համար 5-րդ և 6-րդ դասարաններում դասագրքերը դարձնելով ըստ էության անվճար, իսկ բոլոր դասարանների համար վարձավճարը նվազեցնելով միջինում շուրջ 66%-ով:

2025 թվականին ընդլայնվել է 2024 թվականից որոշ դպրոցներում մասնավորի հետ համագործակցությամբ, փորձնական ներդրված է «Արհեստական բանականություն» (ԱԲ) ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը՝ 15-ից հասնելով 26-ի, ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերը: 2025-2026 ուսումնական տարում ծրագրում ընդգրկված է շուրջ 800 սովորող: Մինչև 2026 թվականը նախատեսվում է ծրագիրը հասանելի դարձնել հանրակրթական դպրոցների աշակերտների ավելի քան 80%-ի համար: Ուշագրավ է, որ ծրագրի մասնակից մարզային դպրոցի աշակերտը, մասնակցելով Արհեստական բանականության միջազգային օլիմպիադային, նվաճել է 3-րդ կարգի մրցանակ /բրոնզե մեդալ/:

10-12-րդ դասարաններում մասնավորի հետ համագործակցությամբ իրականացվում է նաև STEP.ai գիտության և տեխնոլոգիայի կրթական ծրագիրը, որում ընդգրկված է 15 ուսումնական հաստատություն: STEP.ai կրթական ծրագրի «Արհեստական բանականություն» դասընթացը մշակվել է «Սինոփսիս Արմենիա» ընկերության կողմից, իսկ ծրագրի խորհրդատուներն են Սիլիկոնյան հովտի մասնագետները: Դասընթացն ապահովում է ԱԲ թեմաների համապարփակ լուսաբանում՝ հարմարեցված հանրակրթության պետական չափորոշչով սահմանված պահանջներին:

Ներկայում աշխատանքներ են տարվում ԱԲ գրագիտությունը որպես համապարփակ մոտեցում մշակելու և ներդնելու, «Արհեստական բանականության կիրառումը դասավանդման գործընթացում» ուղեցույցի մշակման նպատակով, ինչպես նաև ուսուցիչների ԱԲ գրագիտության բարձրացմանն ուղղությամբ: Ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ գերատեսչությունների, ոլորտի շահառու հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Միաժամանակ, ուշադրության կենտրոնում է երեխաների առցանց անվտանգությունը, այդ թվում՝ սոցիալական ցանցերում երեխաների ներկայության արգելափակման նպատակով:

2025 թվականին հայաստանյան դպրոցների աշակերտները միջազգային օլիմպիադաներում արժանացել են 91 մեդալների՝ 13 ոսկի, 29 արծաթ, 49 բրոնզ:

Ոլորտում երկխոսության, փորձի փոխանակման, մասնագիտական քննարկումների միջավայր ձևավորելու համար անցկացվել են ուսուցչական չորս համաժողովներ, որոնց մասնակցել է ավելի քան 3000 ուսուցիչ: Առաջին անգամ կազմակերպվել է նաև աշակերտական համաժողով՝ 180 սովորողի մասնակցությամբ:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և դեպի ուսումնական հաստատություն ուղղորդման աշխատանքների շրջանակում 2024 թվականից մինչև այժմ կրթության համակարգ է վերադարձել ավելի քան 8000 երեխա, որոնցից շուրջ 3329-ը մինչ այդ երբևէ չեն գտնվել ուսումնական հաստատությունում:

Ոլորտի բարեփոխումներում առաջնահերթ ուղղություն է ուսուցիչների մասնագիտական զարգացումն ու դրան փոխկապակցված վարձատրության բարձրացումը: Եթե 2018 թվականին գործում էր ուսուցիչների հավելյալ խրախուսման միայն մի ծրագիր, որին հատկացված էր 263,9 մլն դրամ, ապա 2025 թվականին խոսքն արդեն ուսուցիչների հավելյալ խրախուսման հինգ տարբեր ծրագրերի մասին է, որին ուղղվել է 15 մլրդ 201.83 մլն դրամ գումար՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 48.15%-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշը՝ 1163%-ով:

2025 թվականի դրությամբ կամավոր ատեստավորումը հաջողությամբ հաղթահարել և այժմ ատեստավորված է 9 602 անձ կամ ամեն 3-րդ ուսուցիչը կամ ուսուցիչների շուրջ 31 %-ը: 2025 թվականին ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել է 7 228 անձ, որոնցից 4 982-ը հաղթահարել է 60% շեմը: 2024 և 2025 թվականներին ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացն իրականացվել է էլեկտրոնային ձևաչափով: Առաջին անգամ էլեկտրոնային ձևաչափ է ներդրվել նաև բողոքարկման համար:

2024 թվականից ներդրվել է ուսուցիչների հերթական ատեստավորման նոր համակարգը, որի շրջանակում արդեն իսկ գնահատվել է 8 238 ուսուցչի (ուսուցչական համակազմի 27.2%-ի) մասնագիտական զարգացման կարիքը: Միայն 2025 թվականին գնահատվել է ատեստավորման ենթակա 2 899 ուսուցչի մասնագիտական զարգացման կարիք, նրանցից 665 ուսուցչի մոտ գնահատվել է առարկայական գիտելիքի իմացության կարիք, որոնք վերապատրաստվել և մասնակցել են կամավոր ատեստավորմանը:

2023 թվականից մեկնարկել է ուսուցիչների տարակարգի տրամադրման նոր համակարգը: 2023 թվականին նոր կարգով տարակարգ է ստացել 101, 2024 թվականին՝ 285 ուսուցիչ, իսկ 2025 թվականի դրությամբ արդեն դիմելու և տարակարգ ստանալու տեմպն ավելի քան 3 անգամ աճել է՝ տարակարգ է ստացել 831 ուսուցիչ՝ ունենալով 10-50% հավելավճար: Նրանցից 135–ը ստացել է 4–րդ աստիճանի տարակարգ, որի դեպքում հավելավճարի չափը կազմում է 50% (մինչև նոր կարգի ընդունումը 4–րդ աստիճանի տարակարգ ստացած ուսուցիչներ չեն եղել):

2025 թվականի դրությամբ բնագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների առարկաներ դասավանդող 9 200 ուսուցիչ կամ ուսուցիչների շուրջ 30%-ն ստանում է 25% հավելավճար:

2025 թվականի դրությամբ գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների խրախուսման ծրագիրը, որը նպատակ ունի խթանել ուսուցիչների հետաքրքրվածությունը՝ դասավանդել գյուղական դպրոցներում, որտեղ օբյեկտիվորեն դասավանդման քիչ ժամեր են առկա, ունի ծրագրի շահառու 3120 ուսուցիչ, որոնք անկախ իրենց դասավանդած դասաժամերից ստանում են մինչև մեկ դրույք ուսուցչական աշխատավարձ:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և խրախուսման ծրագրերի արդյունքում բարձրացել է բազմաթիվ ուսուցիչների վարձատրությունը՝ ներկայում 300 000 – 400 000 դրամ աշխատավարձ ստանում է 2 952 ուսուցիչ, 400 000 – 500 000 դրամ է ստանում 1362 ուսուցիչ, 500 000 – 600 000 դրամ է ստանում 220 ուսուցիչ, 600 000 – 700 000 դրամ է ստանում 70 ուսուցիչ, և 700 000 դրամ և ավելի աշխատավարձ է ստանում 13 ուսուցիչ:

Համալիր քաղաքականության արդյունքում 2024-2025 թվականներին դպրոց են մուտք գործել ավելի քան 4000 նոր ուսուցիչներ: Նրանց կեսից ավելին աշխատում են գյուղական բնակավայրերում, որտեղ ուսուցչի պակասն ավելի զգալի էր: Դպրոց նոր ընդունված ուսուցիչների շուրջ 80 %-ը մինչև 45 տարեկան անձինք են: Այս ցուցանիշները վկայում են, որ մարդիկ սկսում են ուսուցչի աշխատանքը դիտարկել իբրև գրավիչ և մրցակցային, ինչն էլ կառավարության քաղաքականության՝ արդյունավետ և նպատակային լինելու ցուցանիշ է:

2025 թվականին առաջին անգամ իրականացվել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների ատեստավորումը, որի

շրջանակում ատեստավորվել են համակարգում աշխատող 343 հոգեբանները, որոնցից 30-ը գրանցել են 70-100% արդյունք և կստանան 60, 80 կամ 100 հազար ՀՀ դրան ֆիքսված հավելավճարներ: 2026թ. նախատեսվում է ատեստավորում անցկացնել նաև հատուկ մանկավարժների համար:

Շարունակվել են հանրակրթության կառավարման բարեփոխումները. Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 24-ին հաստատվել է բոլոր դպրոցների բովանդակային կառավարումը կրթության լիազոր մարմնին վերապահելու օրենսդրական փաթեթը, որի կիրարկումը հնարավորություն կընձեռի հանրապետության բոլոր դպրոցներում ապահովել կրթության որակի միասնական ստանդարտներ: Միասնական լիազոր մարմնին դպրոցները կփոխանցվեն երկու փուլով՝ սկսած 2026թ. սեպտեմբերից:

2025 թվականի դրությամբ դպրոցի բովանդակային և վարչատնտեսական կառավարման տարանջատված համակարգի է անցել 593 դպրոց կամ պետական դպրոցների 44%-ը: 2023-ից փոխվել է նաև տնօրենների ընտրության գործընթացը, որն իրականացվում է մի քանի փուլով՝ հավակնորդի կողմից դպրոցի զարգացման հնգամյա ծրագրի ներկայացում, ծրագրի փորձաքննություն մրցույթով ընտրված կազմակերպությունների կողմից և մասնագիտական հանձնաժողովի կողմից հարցազրույցի անցկացում: Նոր համակարգով 2023 թվականից ընտրվել է 270 տնօրեն (51-ը փորձաշրջանով՝ 19%), որոնց գերակշիռ մասը՝ 66%-ը՝ 2025 թվականին, ինչը վկայում է ոլորտում կարողությունների շարունակական զարգացման մասին:

Հաշվի առնելով կարողությունների շարունակվող բացը հավակնորդների շրջանում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ՝ սահմանելով տնօրենի՝ փորձաշրջանով աշխատելու հնարավորություն, նախատեսվել է նաև տնօրենի գործուղման ընթացակարգ՝ մրցույթը շարունակաբար չկայացող դպրոցների համար, ինչպես նաև մեկնարկել է տնօրենի հավակնորդների վերապատրաստման փորձնական ծրագիր: Նախատեսվում է ներդնել նաև տնօրենների ատեստավորման գործընթաց, որը հիմնված է լինելու հաստատության զարգացման ծրագրի կատարողականի ցուցանիշների վրա:

2025 թվականին Համաշխարհային բանկի կողմից իրականացվել է դպրոցների կառավարման նոր մոդելի ներդրման գործընթացների վերլուծություն, որի արդյունքում տնօրենների նշանակման եռափուլ համակարգը դիտվել է իբրև նպատակային: Վերլուծության ցուցանիշները ցույց են տալիս, որ նոր համակարգով աշխատող տնօրենների կառավարման որակը միջինում ավելի բարձր է հատկապես մոնիթորինգի, գործառնական կառավարման և ռազմավարական պլանավորման ոլորտներում:

Դպրոցների կառավարման համակարգի փոփոխության գործընթացում մեծ ուշադրություն է հատկացվել նաև վարչատնտեսական կառավարման բարելավմանը, որի շրջանակում մեկնարկել են Տավուշի և Կոտայքի մարզերում դպրոցների հաշվապահական հաշվառման և գնումների կազմակերպման գործընթացների արտապատվիրակման աշխատանքներ: Իրականացված մրցույթների արդյունքներով այդ ծառայությունների համար առաջարկվող արժեքները ավելի քան 40%-ով պակաս են նախահաշվային արժեքից: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում նաև վարչատնտեսական այլ՝

անվտանգության, սննդի և տնտեսվարման գործառույթների արտապատվիրակման ուղղությամբ:

Դպրոցների կառավարման բարեփոխման կարևոր գործիք է թվայնացումը, ինչը հնարավորություն է տալիս հավաքագրել լիարժեք, հավաստի և օբյեկտիվ տեղեկատվություն դպրոցների գործունեության մասին և դրանք կիրառել իրականացվող ծրագրերի մշտադիտարկման և կրթության քաղաքականության մշակման նպատակով: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգով է իրականացվում ոլորտի ֆինանսավորումը, ուսումնական գործընթացքի կառավարումը, ավարտական փաստաթղթերի տրամադրումը և այլ գործընթացներ: 2025-ին լավարկվել է նաև դպրոց ընդունելության էլեկտրոնային գործընթացը, որի արդյունքում՝ տեսանելի է դառնալու անձի կրթական ճանապարհի հետագծելիությունը, «Ես եմ» ազգային նույնականացման համակարգը ինտեգրվել է դպրոց ընդունելության էլեկտրոնային համակարգին, հանվել է մինչև 6 փաստաթղթի ներկայացման պահանջը՝ խնայելով ծնողի կողմից դրա համար ծախսվող մինչև մեկ շաբաթ ժամանակը, որդեգրվել է «մեկ տվյալը մեկ անգամ» սկզբունքը, որի արդյունքում հանվել է մանկապարտեզ հաճախած երեխայի տվյալների մուտքագրման պահանջը, ինչպես նաև 2 և ավելի երեխաների դեպքում կարող են մուտքագրվել միայն 1 երեխայի տվյալները: 2026 թվականին կթվայնացվի նաև ավագ դպրոց ընդունելությունը:

ՀՀ մարզերի դպրոցների 1-4-րդ դասարանների և նախակրթարանների շուրջ 107 000 երեխաների առողջ սննդի տրամադրման ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է ՀՀ պետական ֆինանսավորմամբ: 2026 թվականին ծրագիրը նախատեսվում է ներդնել նաև Երևանի դպրոցներում: Աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը հանրապետությունում հասցված է 86.2%-ի: Տարրական մակարդակում դպրոցական սնունդ ստացող աշակերտների մասնաբաժինը հասցված է 70.5%-ի:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից 60 դպրոցում ներդրվել է ինտենսիվ այգի/բարձր տեխնոլոգիական ջերմատուն: Այս դպրոցներից 48-ում գործում են «Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակները: 2021 թվականից իրականացվում է «Դպրոցական լավագույն մինի այգի» մրցույթը: 2021-2024թթ. անցկացված 4 մրցույթին մասնակցել է շուրջ 95 դպրոց: Ջերմոցներ են կառուցվում նաև 300 դպրոցների ծրագրում ընդգրկված բոլոր կրթահամալիրներում և մոդուլային դպրոցներում:

Միաժամանակ 2023 թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) «Կաթ դպրոցներին» փորձնական ծրագիրը, որն արտացոլում է ՀՀ կառավարության հանձնառությունը՝ աջակցելու աշակերտների շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը և սննդային ճիշտ վարքականոնի ձևավորմանը: Վայոց ձորի մարզում փորձնական ծրագրի դրական արդյունքների վրա հիմնվելով, ծրագիրն ընդլայնվել և իրականացվել է նաև Լոռու մարզի 7 դպրոցի 5-9-րդ դասարանների շրջանում: Ծրագրին մասնակցել է 1 360 աշակերտ:

Ծրագրի արդյունքները գնահատելով՝ հարցված ծնողների 58%-ը գտնում է, որ երեխաները քաղցած չեն լինում դպրոցում կաթ խմելուց հետո, 66%-ը համարում է, որ կաթը շատ կարևոր է երեխայի առողջության համար: Ինչպես նաև ծնողների 70%-ը գտնում է, որ ծրագրի իրականացման արդյունքում իրենց երեխաները սկսել են ավելի շատ կաթնամթերք օգտագործել, իսկ 50%-ը կարծում է, որ երեխաները կաթ խմելուց հետո սկսել են ավելի քիչ օգտագործել վնասակար սնունդ:

Արտադպրոցական կրթություն

2025 թվականին արտադպրոցական կրթության ներառումը համընդհանուր հայտարարագրման շրջանակներում որպես սոցիալական կրեդիտ էապես ընդլայնեց արտադպրոցական կրթության հասանելիությունը: Խոսքը միայն 400-ից ավելի պետական և համայնքային արտադպրոցական հաստատություններում ավելի քան 100.000 սաների մասին է: Միաժամանակ, այս քաղաքականության արդյունքում, ծրագրից օգտվելու համար դիմեցին և երաշխավորվեցին նաև 17 ոչ պետական արտադպրոցական կազմակերպություններ, ինչպես նաև պետական և համայնքային 85 արտադպրոցական հաստատություններ ներկայացրեցին հավելյալ 478 ծրագրեր:

Արտադպրոցական կրթությունը խրախուսվում է նաև դպրոցներում: Մասնավորապես, արտադպրոցական տեխնոլոգիական կրթության շրջանակներում 638 դպրոցներում պետական ֆինանսավորմամբ գործում են 1 070 «Արմաթ» ինժեներական աշխատանոց-խմբակներ, որտեղ հաճախում է շուրջ 17 000 դպրոցական:

Հանրապետությունում գործում են նաև 6 Թումո կենտրոն, 31 Թումո տուփեր տեղադրված են դպրոցների հարակից տարածքներում և շուրջ 32 000 12-15 տարեկան երեխաներն անվճար մասնակցում են առաջարկվող դասընթացներին, որոնց շարքում կարևոր տեղ ունի արհեստական բանականության գրագիտությունը:

Արտադպրոցական կրթության հաջողված մոդել են նաև «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի սմարթ կենտրոնները, որոնք նույնպես ընդլայնվում են կառավարության աջակցությամբ, դրանցից օրինակ Լոռու մարզի սմարթ կենտրոնում շաբաթական հաճախում է շուրջ 2 000 երեխա 30 գյուղական բնակավայրերից:

Արտադպրոցական կրթության որակի բարելավման նպատակով իրականացվել են նաև մի շարք իրավական ակտերի՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրության, մանկավարժական աշխատողների պաշտոնի անվանացանկի և նկարագրերի, ֆինանսավորման կարգի նախագծերի մշակման աշխատանքներ, որոնց հաստատումն ու կիրարկումը հնարավորություն կտան էականորեն բարձրացնել արտադպրոցական կրթության որակը:

2023 թվականից մեկնարկել և 2024 թվականից ընդլայնվել է արվեստի ու սպորտի ոլորտներում արտադպրոցական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորման գործընթացը: Նախորդ տարում վերջինիս մասնակցելու հնարավորություն էին ստացել սպորտի ոլորտում 2023թ. 4 մարզաձևի փոխարեն 12 մարզաձևի մարզիչ-մանկավարժներ, մշակույթի ոլորտում՝ 2 ուղղության փոխարեն՝ 8 ուղղության մանկավարժներ: 2025թ. կամավոր ատեստավորումն իրականացվել է ամբողջությամբ նոր 11 ուղղություններով՝ պղնձյա և փայտյա փողային գործիքներ, պարարվեստ, թատերարվեստ, նվագակցություն, շախմատ, լող, սպորտային մարմնամարզություն, ակրոբատիկա, ցատկացանց, գեղարվեստական մարմնամարզության, որոնց մասնակցել է 212 հոգի, ատեստավորումը հաղթահարել է մասնակիցների 34.4%-ը:

Ընդհանուր առմամբ ատեստավորումը հաղթահարել է 290 մանկավարժ, որոնցից 2023 թվականին՝ 46, 2024 թվականին՝ 171, 2025 թվականին՝ 73 մանկավարժական

աշխատողներ: Ատեստավորված մանկավարժների 77.2%-ը մշակույթի ոլորտի, 22.8%-ը՝ սպորտի ոլորտի մանկավարժներ են:

Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական կրթության ոլորտում վերջին տարիներին բարելավվել է ընդգրկվածության ցուցանիշը: 2025 թվականին նախադպրոցական կրթության համակարգում 3-5 տարեկանների ընդգրկվածությունը կազմել է 81% , որը 2021 թվականի 64.3% ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 17%-ով: Նախատեսվում է, որ 5 տարեկանների կրթությունը կդառնա պարտադիր՝ հնարավորություն տալով երեխաներին տարրական կրթությունից առնվազն մեկ տարի առաջ նախապատրաստվել դպրոցական կրթությանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության վերաբերյալ ամբողջական ցուցանիշների թվայնացման և նոր մոտեցմամբ հավաքագրման հարցը քննարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ, արդյունքում՝ 2026 թվականից ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանդիսանալու է վարչական ռեգիստրի վարող և նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը հաշվարկվելու է ինքնաշխատ եղանակով: Միևնույն ժամանակ նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգը փոխգործելի է Երևանի քաղաքապետարանի և ՏԿԵՆ-ի տեղեկատվական համակարգերի հետ:

Նախադպրոցական կրթության հասանելիության ամենակարևոր ծրագիրը 500 մանկապարտեզների և նախակրթարանների կառուցման, վերակառուցման և վերանորոգման/հիմնանորոգման ծրագիրն է, որի շրջանակում ներառված են 505 մանկապարտեզներ և նախակրթարաններ: Ընդհանուր առմամբ 2021-2025թթ. ընթացքում կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել/վերանորոգվել են շուրջ 280 մանկապարտեզներ և նախակրթարաններ:

Նախադպրոցական ծառայություններ կգործեն նաև ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված և արդեն շինարարությունը մեկնարկած բոլոր 59 կրթահամալիրներում, որոնք ընդգրկված են 500 մանկապարտեզ ծրագրում և կապահովեն շուրջ 3700 նախադպրոցական երեխաների կրթությունը:

500 մանկապարտեզների ծրագրում են նաև նախակրթարանները, որոնք գործում են դպրոցների հիմքի վրա: 2025 թվականի դրությամբ հանրապետության 413 դպրոցներում գործում են նախակրթարաններ, որտեղ նախադպրոցական կրթություն են ստանում 5 298 երեխաներ: Այս ծառայության ֆինանսավորումը, ներառյալ դպրոցական սննդի ծրագրից օգտվելը, ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից՝ շուրջ 829.3 մլն դրամի չափով:

Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները և նախակրթարանները հագեցվել են ժամանակակից պահանջներին բավարարող նոր գույքով:

Երեխաների ընդգրկվածության ապահովման նպատակով մեծ ծավալի աշխատանք է իրականացվել նաև մասնավոր մանկապարտեզների և կենտրոնների հետ: Մասնավորապես, 2025 թվականի դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում լիցենզավորված մասնավոր նախադպրոցական հաստատությունների թիվը 249 է, որտեղ հաճախում է շուրջ 10 800 երեխա: Այսպիսով, լիցենզավորված մասնավոր նախադպրոցական հաստատությունների թիվը 2024-ի նկատմամբ աճել է 60.6%-ով, իսկ

երեխաների թիվը՝ 31.7%-ով: Քաղաքային բնակավայրերում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների 22.3%-ը ընդգրկված է մասնավոր մանկապարտեզներում:

Այս համալիր աշխատանքների արդյունքում նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի թիվը կտրուկ կրճատվել է՝ 2025թ վականի դրությամբ հանրապետության 1 011 բնակավայրերից միայն 87-ում կամ 8.6%-ում առկա չեն նախադպրոցական ծառայություններ, մինչդեռ 2023թ. ցուցանիշը եղել է 229 կամ շուրջ 22.7%: Ցուցանիշը բարելավվել է 62%ով:

Շարունակվել է մանկապարտեզներում համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացը, որի մեկնարկը տրվել էր 2023 թվականից: 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից անվճար նախադպրոցական կրթություն է ստացել 1 719 կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա՝ 2023 թվականի նկատմամբ գրանցելով 38% աճ, ինչը վկայում է երեխաների վաղ հայտնաբերման և միջամտության ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության մասին:

ՀՀ կառավարության ծրագրի հաջորդ կարևոր թիրախը մսուրի ծառայությունների ընդլայնումն էր՝ ապահովելով նաև 2 տարեկանից փոքր երեխաների համար ծառայությունների հասանելիությունը բոլոր խոշորացված համայնքներում: 2025թ. ավարտի դրությամբ Երևանի երկու մանկապարտեզներում արդեն իսկ գործում են 1 տարեկանից սկսած նախադպրոցական ծառայություններ: 2026-ի սկզբից 1 տարեկաններին կընդունեն ևս 8 մանկապարտեզներում, նաև Վանաձորում, Հրազդանում, Գյումրիում: Փորձնական ծրագրում ընդգրկված է 145 երեխա: Երևանում կգործի նաև նախադպրոցական ծառայություն վեց ամսականների համար: Կարևորելով վաղ մանկության տարիքի երեխաների նախադպրոցական կրթությունը, հաստատվել են ծննդից մինչև 1 տարեկան և 1-2 տարեկան խմբերի կրթական ծրագրերը, ավելացվել են մսուրային խմբերում դաստիարակի, դաստիարակի օգնականի և բուժքրոջ հաստիքային միավորները: Կազմակերպվել են այդ խմբերի հետ աշխատող մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ:

Նախադպրոցական կրթության պատշաճ որակի ապահովման նպատակով 2025 թվականին նախադպրոցական կրթության չափորոշիչն արդեն իսկ ներդրվել է հանրապետության բոլոր մանկապարտեզներում և նախակրթարաններում՝ ամփոփելով 2022-ին մեկնարկած գործընթացը: Միաժամանակ այն առաջին փուլի ներդրման արդյունքներով չափորոշիչը զուգահեռաբար կատարելագործվել է և հաստատվել լրամշակված տարբերակով՝ ապահովելով նախադպրոցական որակյալ կրթություն և սահուն անցում դեպի դպրոցական կրթություն:

Չափորոշչի արդյունավետ գործարկման նպատակով ներդրվել է նաև մենթորական ծրագիր, որի շրջանակում շուրջ 3 900 մանկավարժական աշխատողի վերապատրաստման միջոցով տրամադրվել է մեթոդական աջակցություն:

2022 թվականին ներդրվել էր նախադպրոցական մանկավարժների վերապատրաստման պարտադիր ծրագիր, որին ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 5 600 նախադպրոցական մանկավարժ, որոնցից 1 100-ը՝ 2025 թվականին: Բացի այդ, վերապատրաստվողների շրջանակը ընդլայնվել է. վերապատրաստվել են նաև շուրջ 750

մանկավարժի օգնականներ: Նախադպրոցական կրթության չափորոշչի ներդրման շրջանակում ընդհանուր առմամբ վերապատրաստվել է նախադպրոցական ուսումնական հաստատության շուրջ 1 800 մանկավարժական աշխատող, որոնցից 200-ը՝ տնօրեն: Այսպիսով, մանկապարտեզների մանկավարժական աշխատողների շուրջ 75%-ն արդեն իսկ վերապատրաստվել է կրթության արդի բովանդակությանը համապատասխանող ծրագրերով:

Շարունակվել է մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված համակարգի՝ տարակարգի տրամադրումը, որի շրջանակում 2025 թվականի դրությամբ նախադպրոցական տարակարգ ստացել է 79 մանկավարժական աշխատող, որոնցից 53-ը՝ 2025 թվականին: Մանկավարժներից 75-ը ստացել է 1-ին, իսկ 4-ը՝ 2-րդ աստիճանի տարակարգ: Վերջիններս ՀՀ պետական բյուջեի միջոցներից ստանում են 30-40% հավելավճար: Նախադպրոցական ոլորտի մանկավարժների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված համակարգը ներդրվել է 2023 թվականին:

Հատկապես փոքր գյուղական բնակավայրերում գործող մանկապարտեզներում առկա են թափուր հաստիքներ, որոնց համալրման մրցույթները դեռևս ցանկալի արդյունք չեն տալիս: «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի փոփոխությամբ մանկապարտեզներում աշխատանքի հնարավորություն է տրվել մանկավարժական կրթություն ունեցող, բայց դաստիարակի որակավորման պահանջին չհամապատասխանող անձանց՝ նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող 20 կրեդիտի տրամադրման դասընթացի միջոցով: Նշված դասընթացի կազմակերպման համար երաշխավորվել է մեկ կազմակերպություն:

Օրենսդրական մեկ այլ փոփոխությամբ էլ նախատեսվում է փոխհատուցել այն մասնագետների տրանսպորտային ծախսերը, որոնք կորոշեն աշխատել հարևան բնակավայրերի նախադպրոցական հաստատություններում:

Տնօրեններին ներկայացված հավաստագրման պահանջի շրջանակում, 2025 թվականի դրությամբ հավաստագրված տնօրեն ունեցող մանկապարտեզների մասնաբաժինը հասցված է 90%-ի: 2024 թվականին հավաստագրված տնօրեն ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը կազմում էր շուրջ 80%: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՀՀ կառավարության ձեռնարկած հետևողական քայլերի արդյունքում էապես բարձրանում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի գրավչությունը: 2025թ. դրությամբ քոլեջներում սովորում է ավելի քան 47 700 ուսանող՝ 2018-ի նկատմամբ ուսանողների թիվը աճել է ավելի քան 36%-ով: 2021 թվականի նկատմամբ 2025 թվականին ընդունելության ցուցանիշը բարելավվել է մոտ 29%-ով: 2021թ. մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվել էր 12 772 ուսանող, իսկ 2025թ.՝ 16 497 ուսանող:

Աճը հատկապես զգալի է շինարարության, արդյունաբերության և գյուղատնտեսության գերակա մասնագիտությունների ուղղությամբ, որոնց մասով 2023 թվականից գործում է ամսական առնվազն 50 հազար դրամ կրթաթոշակի ծրագիրը: Եթե 2023թ. գերակա

մասնագիտություններով ընդունվել էր 874 ուսանող, ապա 2025թ. այդ թիվը ավելի քան կրկնապատկվել է. ընդունվել է 1 786 ուսանող: Ներկայումս գերակա մասնագիտություններով սովորող 3 040 ուսանող ստանում է կրթաթոշակ, որից 1 585-ը՝ արհեստագործական, 1 455-ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրերով:

Կիրարկման փուլում է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ նոր օրենքը, որը համակարգային փոփոխություններ է մտցնում ոլորտում՝ առանցքային դարձնելով աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, մասնավորի հետ համագործակցությունն ու տնտեսության հետ կապը: Մասնավորապես՝ քոլեջների գործառույթների հստակեցման, մասնավորի հետ համագործակցության ընդլայնման, ձեռնարկատիրական գործունեության ծավալման հնարավորությունների ստեղծման նպատակով վերախմբագրվել է հաստատությունների օրինակելի կանոնադրությունը, ըստ որի՝ այսուհետ գործելու է հաստատության միայն մեկ տիպ՝ քոլեջ և բոլոր հաստատությունները հնարավորություն են ստանալու իրականացնել ինչպես արհեստագործական, այնպես էլ միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

Իրականացվում են մեծածավալ աշխատանքներ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման ձևերի ներդրման ուղղությամբ: 2021 թվականից մշակվել և ներդրվել են 26 դուալ կրթական ծրագրեր, որոնցից 3-ը՝ 2025 թվականին: Ընդհանուր առմամբ, 2025թ. դրությամբ դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվում են 20 Քոլեջում՝ 25 մասնագիտություններով: Արդյունքում, այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 17%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 23%-ի:

Մասնագիտական կրթության որակի բարձրացման, մասնավորի հետ համագործակցության և աշխատանքի վրա հիմնված ուսուցման եղանակով իրականացվող կրթական ծրագրերի ընդլայնման նպատակով՝ նախատեսվում է ստեղծել նոր կառույց՝ գործող կառույցների հիման վրա, որը պատասխանատու կլինի մասնագիտական կրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրերի համար, ինչպես նաև կհամակարգի դուալ կրթությունը: Համապատասխան փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը:

Քոլեջների օպտիմալացման ծրագրերի շրջանակում շարունակվել է քոլեջների միավորման գործընթացը՝ համապատասխան վերլուծությունների հիման վրա: 2021 թվականից իրականացվել է 13 քոլեջների միավորման 7 գործընթաց, որից 2–ը՝ 2021-2023 թվականներին, 3-ը՝ 2024 թվականին և 2-ը՝ 2025 թվականի ընթացքում:

Շարունակաբար իրականացվում է Քոլեջներում դասավանդվող մասնագիտությունների ցանկի վերանայում և դրա համապատասխանեցում տնտեսության պահանջներին: Այս գործընթացն իրականացվում է ինչպես ոլորտային պատասխանատու գերատեսչությունների, այնպես էլ՝ մասնավոր ոլորտի հետ համագործակցության շրջանակում: Այսպես, 2025 թվականին ոլորտում ներդրվել են հետևյալ 2 նոր մասնագիտությունները՝ «Ոստիկանական գործ» մասնագիտություն «Համայնքային ոստիկան» որակավորմամբ, «Գինեգործություն (խաղողագործություն և էնոլոգիա)»՝ «Կրտսեր տեխնոլոգ՝ գինեգործության» որակավորմամբ:

2025 թվականին շարունակվել է քոլեջների դասախոսների և վարպետների վարձատրությունը առնվազն կրկնապատկող, երբեմն նաև եռապատկող ատեստավորման

մեխանիզմը: Այն մեկնարկել էր 2024թ.՝ 4 ուղղություններով՝ ագրարային, ՏՏ, խոհարարություն և ոսկերչություն, 2025թ. ատեստավորման ուղղություններն ընդլայնվել են՝ ներառելով նաև տեքստիլ ոլորտին վերաբերող մասնագիտությունները: 2024թ. ատեստավորման արդյունքներով 276 մանկավարժ հաղթահարել է շեմը և առնվազն կրկնապատկել վարձատրությունը: 2025թ. ատեստավորվել է 181 մասնագետ: Ատեստավորման արդյունքում մասնակիցներից 71-ը կամ 39,2%-ը հաղթահարել է նվազագույն շեմը և ունեցել է դրույքաչափի փոփոխություն՝ 200 հազ. դրամի չափով, իսկ շուրջ 110 մասնակից կամ 60.7 տոկոսը գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ և ստանալու են նաև լրացուցիչ 30%, 40%, 50% հավելավճար՝ ըստ հավաքած միավորների: Ատեստավորվածների ընդհանուր թիվը 457 է կամ քոլեջների դասախոսների և վարպետների 7.3 տոկոսը:

Քոլեջների հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժները 2023 թվականից հնարավորություն ունեն մասնակցելու հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման գործընթացին: 2025թ. դրությամբ դրական արդյունքներ գրանցած 174 մանկավարժներ ստանում են և՛ դրույքաչափի փոփոխություն, և՛ հավելավճար՝ ըստ հավաքած միավորի:

2025թ. տարեվերջին քոլեջների մանկավարժների համար նույնպես ներդրվել է տարակարգի մեխանիզմը, որի արդյունքում քոլեջների մանկավարժներին կարող է շնորհվել եռաստիճան տարակարգ՝ մանկավարժական դրույքի 20%, 30%, 50%-ի չափով հավելավճարի տրամադրման հնարավորությամբ: Արդեն իսկ ներկայացվել են տարակարգ ստանալու 5 հայտեր, որոնք ներկայումս փորձաքննության փուլում են:

2025թ. շարունակվել են իրականացվել քոլեջների ենթակառուցվածքների բարելավման ծրագրերը: 2021-2025թթ. ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ են իրականացվել 16 ուսումնական հաստատություններում, որոնցից՝ 2-ը՝ կառուցում, 3-ը՝ վերակառուցում, 2-ը՝ հիմնանորոգում և 9-ը՝ մասնակի նորոգում: Ընդ որում, 2 հաստատության շենքերի վերակառուցման, 1-ի հիմնանորոգման և 9-ի մասնակի նորոգման աշխատանքներն ավարտված են: Ենթակառուցվածքների բարելավումը կրում է շարունակական բնույթ և արդեն նախատեսված են նաև նոր ծրագրեր թվով 10 հաստատության համար: Ենթակառուցվածքների բարելավման ծրագրերն ուղղված են ոչ միայն շենքային պայմանների, այլև գույքի և դասավանդման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Բարձրագույն կրթություն

2025թ. հոկտեմբերին ուժի մեջ է մտել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթը: Ստեղծվել է բարձրագույն կրթության և գիտության համակարգի մեկ միասնական իրավական հենք՝ նախկինում ոլորտները կարգավորող 4 օրենքների փոխարեն: Օրենքը ապահովել է ինստիտուցիոնալ ներդաշնակություն ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված թիրախների, ինչպես նաև միջազգային չափորոշիչների հետ:

Օրենքն ստեղծում է լիարժեք իրավական շրջանակ ոլորտներում բարեփոխումների իրականացման համար՝ երաշխավորելով ինչպես գիտության ոլորտի առաջանցիկ

զարգացումն ու մրցունակության բարձրացումը և հնարավորություն ընձեռելով ոլորտում պետական ավելի արդյունավետ ներդրումների, այնպես էլ բարձրագույն կրթության ոլորտը դարձնելով ավելի առաջադեմ, ուսանողակենտրոն և միտված շրջանավարտի հաջողությանն ու ինքնուրույնությանը:

Բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բարեփոխումների իրականացման հիմնական հարթակը «Ակադեմիական քաղաք» մեգածրագիրն է, որ 2025-ին ունեցել է էական առաջընթաց թե նախապատրաստական աշխատանքների փուլի ամփոփման, թե գետնի վրա աշխատանքների մեկնարկի ու հանրային մասնակցության իմաստով:

Մեկնարկել են Ակադեմիական քաղաքի տարածքի մաքրման աշխատանքները որի առաջին փուլով մաքրվել է 2.7 հա տարածք՝ ազատելով տարածքը շուրջ 10 000 խմ աղբից, աշխատանքի հաջորդ փուլերը կշարունակվեն արդեն 2026թ:

Ակադեմիական քաղաքի տարածքում մեկնարկել են նաև հնագույն բնակատեղիի և դամբարանադաշտերի պեղումները, որոնգ առաջին արդյունքները վկայում են, որ Ակադեմիական քաղաքում կարող է ձևավորվել նաև պատմամշակութային ժառանգության եզակի միջավայր:

2025թ. վերջնականացվել են նաև տարածքում գտնվող բարձրավոլտ էլեկտրասյուների տեղափոխության, ինչպես նաև տարածքին մոտեցող ենթակառուցվածքների նախագծման աշխատանքների տեխնիկական պահանջները, որոնց հիման վրա 2026 թվականից կմեկնարկեն դրանց նախագծման աշխատանքները:

Միաժամանակ, ներգրավված հեղինակավոր միջազգային գործընկերների, ինչպես նաև մասնագիտացված տեղական գործընկերոջ ներգրավմամբ ամբողջականացվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի փաթեթը՝ ՀՀ օրենսդրության համաձայն, որը ներկայացվել է հետագա հաստատման: Հատակագծի փաթեթի վերջնականացմանը նախորդել են տարվա ընթացքում կատարված հետևյալ աշխատանքները.

- ՋիԷմՓի գերմանական կազմակերպության և տեղական գործընկեր կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակում իրականացվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծումը,

- Իրականացվել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը՝ գերմանական RSUP ընկերության հետ կնքված պայմանագրով, որը ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքաշինական զարգացման մոդելները, գույքերի կառավարման առաջարկները, շահառուների հետ հաղորդակցման ռազմավարությունը և ծրագրի ռիսկերի կառավարման սխեման,

- Գլխավոր հատակագծի մշակման շրջանակներում իրականացվել է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային շարժունակության նախագծի մշակում՝ իտալական Սիստեմատիկա ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակում, որը ներառում է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային ներքին ցանցի և արտաքին տրանսպորտային համակարգերի հետ կապակցվածության ուսումնասիրությունն ու հայեցակարգի մշակումը:

Ակադեմիական քաղաքի գիտակրթական և տեխնոլոգիական բաղադրիչի շրջանակում շարունակվել է համագործակցությունը առաջատար միջազգային բուհերի հետ, մասնավորապես.

- Մյունխենի տեխնիկական համալսարանի կողմից մշակվել և ներկայացվել է տեխնոլոգիական կլաստերի ուղղությամբ Ակադեմիական քաղաքի կառավարման շրջանակի, նորարարությունների կառավարման մոդելի, բուհերի և հետազոտական ինստիտուտների խոշորացման հայեցակարգը,

- Կրթական կլաստերի ուղղությամբ պայմանագիր է ստորագրվել Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթական ինստիտուտի (UCL IoE) դուստր կազմակերպություն «ՅուՍիէլ Քընսալթանթս Լիմիթիդ»-ի հետ, որը սկսել է խորհրդատվական աշխատանքները Ակադեմիական քաղաքի կրթական կլաստերի ձևավորման ուղղությամբ,

- Արվեստների կլաստերի ուղղությամբ վերջնականացվել է 2023թ. նոյեմբերին Լոնդոնի արվեստների համալսարանի հետ արդեն իսկ ձևավորված համագործակցության հիման վրա պայմանագիրը, 2025թ. մայիսին արվեստների կլաստերի ուղղությամբ աշխատանքներին հավելվել է Շոտլանդիայի թագավորական կոնսերվատորիայի հետ (կատարողական արվեստի ոլորտում QS World Rankings 2025 վարկանիշավորման ցանկի համաձայն աշխարհի տասը լավագույն կրթական հաստատություններից մեկն է) կնքված մտադրությունների նամակը:

Այս աշխատանքների համախումբը հնարավորություն են տվել վերանայել և հստակեցնել ծրագրի իրականացման փուլայնությունն ու ռազմավարությունը: Ըստ այդմ, մշակվել է Ակադեմիական քաղաք ծրագրի վերանայված հայեցակարգը, որը հստակեցնում է ծրագրի նկարագիրն ու սկզբունքները, իրականացման փուլերն ու ժամանակացույցը: Հայեցակարգը ներկայացվել է հաստատման:

Վերանայված հայեցակարգով Տաղանդների զարգացման ծրագիրը ներառվել է որպես Ակադեմիական քաղաք ծրագրի բաղադրիչ՝ նպատակ ունենալով հայտնաբերել, աջակցել և զարգացնել բացառիկ կարողություններով երեխաներին ու երիտասարդներին՝ ապահովելով նրանց հմտություններին, հետաքրքրություններին և կարիքներին համապատասխան անհրաժեշտ ռեսուրսների, կրթական հնարավորությունների և տեխնոլոգիական միջոցների հասանելիությունը:

Նպատակ ունենալով խթանել Ակադեմիական քաղաք ծրագրի բուն իրականացման և ենթակառուցվածքների շինարարության գնի հաշվարկման ներդրումային տարբեր ձևաչափերով՝ ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ լայնածավալ ուսումնասիրություն իրականացնելու համար ներգրավվել է միջազգային Էրնսթ ընդ Յանգ (Ernst&Young) կազմակերպությունը: Կազմակերպությունը վերջնական զեկույցը կներկայացնի 2026թ. մարտին: 2026-ին նախատեսվում է կազմակերպել նաև առանձին ներդրումային համաժողով:

Ակադեմիական քաղաք ծրագրի շուրջ հանրային իրազեկումը բարձրացնելու նպատակով 2025թ. հոկտեմբերին «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կողմից իրականացվել է լայնածավալ տեղեկատվական արշավ Հայաստանի 10 մարզերի 14 քաղաքներում, որոնց մասնակիցների քանակը եղել է ավելի քան 17.000 մարդ, միևնույն ժամանակ

տեղեկատվական արշավի նյութերն ունեցել են մոտ 1 մլն դիտում սոցիալական հարթակներում:

Երևանում 2025թ. հոկտեմբերի 20-21-ին տեղի է ունեցել «Ակադեմիական քաղաք Հայաստան. գիտելիքի միջազգային ֆորումը»: Այն նպատակ ուներ միավորելու բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտների քաղաքականություն մշակող մարմիններին, միջազգային կազմակերպություններին, ակադեմիական առաջնորդներին և փորձագետներին՝ քննարկելու բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում զարգացման գլոբալ միտումները և փոխակերպումները: Ֆորումին մասնակցել են շուրջ 1000 մասնակիցներ, իսկ դրա վերաբերյալ նյութերն ունեցել են շուրջ 1 մլն դիտում սոցիալական ցանցերում:

Ընդհանուր առմամբ, բուհական համակարգն արդեն իսկ նախապատրաստվում է դեպի Ակադեմիական քաղաք ճանապարհին՝ իրականացնելով ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ակտիվացնելով միջազգային համագործակցությունն ու ճանաչումը: Մասնավորապես, միջազգային հավատարմագրում են ստացել՝ 2025թ. 4 բուհ, 2024 և 2023թթ.՝ 1-ական բուհեր:

2025 թվականին ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերի արդյունքներով գործող համակարգով բակալավրի կրթական ծրագրերով բուհ է ընդունվել 10 970 առաջին կուրսեցի, որոնցից 2.074-ը՝ ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, իսկ 8 896-ը՝ վճարովի հիմունքներով: Այս ցուցանիշը գերազանցում է նախորդ տարիների ընդունելության արդյունքները:

2025 թվականին հեռակա ընդունելության մրցույթի արդյունքում բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվել 3 131 ուսանող, ինչը 18%-ով գերազանցում է 2024-ի , և 48 %-ով՝ 2023-ի ընդունելության ցուցանիշները:

2025-ին պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսուցման ընդունելության համար նախատեսված 2 142 ընդհանուր տեղերի թվի ավելի քան 59%-ը հատկացվել է ԲՏՃՄ ոլորտին: Այս միտումը առկա է եղել նաև վերջին երկու տարիներին՝ 2024-ի համար կազմելով 2 096 տեղերից՝ 1 264-ը (ընդհանուր տեղերի թվի 61%-ը), իսկ 2023-ի ուստարվա համար՝ 2 146 տեղերից՝ 1 174-ը (ընդհանուր տեղերի թվի 55%-ը):

Շարունակվել է պետության կողմից ԲՏՃՄ ուղղություններով մասնագիտական մանկավարժության և ագրարային մի շարք մասնագիտություններով սովորողների խրախուսման ծրագիրը՝ ամսական 70-77 հազար դրամ կրթաթոշակի միջոցով, որի շրջանակներում 2025-ին բուհեր է ընդունվել 512 ուսանող (327-ը՝ ԲՏՃՄ մասնագիտական մանկավարժության ոլորտում, և 185-ը՝ ագրարային ոլորտի համապատասխան մասնագիտություններով): Խրախուսման տվյալ քաղաքականությունն ագրարային մասնագիտությունների վրա տարածվել է 2024 թվականից: Տարվող քաղաքականությունը վերջին երկու տարում նպաստել է ոլորտի նկատմամբ հետաքրքրության աճին և ընդունելության ընդհանուր ցուցանիշների բարելավմանը:

ԲՏՃՄ ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով (3-ը՝ մագիստրոսի և 141-ը՝ բակալավրի կրթական ծրագրով) համապատասխան բուհերում սովորող 144 ուսանողի տրամադրվել է պարտադիր

զինվորական ծառայության զորակոչից տարկետում: Այս ուղղություններով պետական պատվերով ընդունելությունը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է 8%-ով:

2025-2026 ուստարում բուհերում նպատակային ընդունելության շրջանակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հատկացվել է ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 7 նպատակային տեղ, որոնց հանձնաժողովի որոշմամբ ավելացվել է 4 լրացուցիչ տեղ: Արդյունքում, նպատակային ընդունելությամբ բուհ է ընդունվել 11 ուսանող, իսկ ընդունելության մրցույթի արդյունքում վճարովի համակարգ է ընդունվել 23 ուսանող: 44 ուսանողներից 14-ը աղջիկներ են:

Հայաստանի ազգային ագրարային և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում ներդրվել են ընդունելության նոր՝ փորձնական կարգեր, որոնցով պայմանավորված 2025-2026 ուսումնական տարում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան են ընդունվել 238 ուսանողներ, իսկ Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 737 ուսանողներ (այդ թվում 99-ը՝ Վանաձորի մասնաճյուղ և 40-ը՝ Սիսիանի մասնաճյուղ): Նախորդ՝ 2024-2025 ուսումնական տարվա ցուցանիշներով Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդունելության ցուցանիշը բարելավվել է 75,8 տոկոսով, Հայաստանի ազգային ագրարային համալսարանինը՝ 15,7 տոկոսով:

Էապես վերանայվել են ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների ընդունելության, ակադեմիական շարժունության կարգերը՝ մեծացնելով գործընթացների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, տվյալների հավաստիության ստուգելիությունը, նախատեսելով նաև գործընթացի իրականացումը էլեկտրոնային հարթակի (https://fs.emis.am/) միջոցով:

Արդյունքում էլեկտրոնային համակարգում 2025-2026թթ. ուսումնական տարվա ընդունելության համար գրանցվել է 2175 հայտ, որից 771-ը՝ սփյուռքահայ դիմորդ, 1404-ը՝ օտարազգի դիմորդ, հաստատվել է 2018 հայտ, որից 743-ը՝ սփյուռքահայ, 1275 օտարազգի: Էլեկտրոնային համակարգի շահագործման արդյունքում օտարերկրյա դիմորդների ընդհանուր թիվն աճել է 38%-ով: Միայն օտարազգի քաղաքացիների հայտերի քանակը 2024թ. համեմատ աճել է 90%-ով: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող դիմորդների թվաքանակի ավելացումը փաստում է էլեկտրոնային նոր համակարգի կիրառման արդյունավետության և Հայաստանի բուհերի միջազգային գրավչության բարձրացման մասին:

Գործում են միջպետական կրթաթոշակային ծրագրեր օտարերկրյա 9 պետությունների հետ, մասնավորապես՝ Վրաստան, Հորդանան, Չինաստան, Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Վիետնամ, Հունգարիա և Իրան: Միջպետական համաձայնագրերի շրջանակում 2025-2026 ուստարում օտարերկրյա 45 քաղաքացի ընդունվել է ՀՀ բուհեր, ՀՀ 208 քաղաքացի՝ օտարերկրյա բուհեր:

2025-2026 ուսումնական տարում ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունվել է 70 սփյուռքահայ՝ հայագիտական, մանկավարժական և արվեստի բնագավառի մասնագիտություններով:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին մշակվել և հաստատման է ներկայացվել գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիաների ոլորտի 2026-2030 թվականների գերակա ուղղությունները:

Ռազմավարությամբ գիտության ոլորտը դառնալու է միջազգայնորեն մրցունակ և արդյունավետորեն ինտեգրված է լինելու բարձրագույն կրթության համակարգին՝ հետազոտության բոլոր տեսակներում ապահովելով երիտասարդ կադրերի արդյունավետ և համակարգված ներգրավումը, նպաստելով նոր կադրերի ձևավորմանը, ինչպես նաև արդյունավետորեն ծառայելու է պետական կարիքներից բխող կամ առևտրայնացման հեռանկար ունեցող մրցունակ հետազոտությունների իրականացմանը, տեխնոլոգիաների փոխանցմանը և համապատասխանելու է առավելագույն ազդեցության հրամայականին:

2025 թվականին գիտության ոլորտի (ներառյալ ռազմարդյունաբերության) հատկացվող պետական միջոցների ծավալը կազմել է շուրջ 40,2 մլրդ դրամ (ՀՆԱ-ի հարաբերակցությամբ 2018 թվականի համեմատ աճել 0,12 %-ով)՝ պահպանելով 2024 թվականին գրանցված ծավալը, ինչը 4,2 մլրդ դրամով գերազանցում է 2023 թվականի ցուցանիշները:

2025թ. պահպանվել է 2023թ. մեկնարկած կապիտալ բնույթի ծախսային միջոցառումների շարունակականությունն ու կայունությունը, որի արդյունքում՝

- Գիտահետազոտական կազմակերպությունները ժամանակակից սարքավորումներով վերազինելու և համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծման նպատակով, 2025թ. հատկացվել է 6,7 մլրդ դրամ, որից 1,17 մլրդ նախատեսվել է 2024 թվականին տարեվերջին ձեռք բերված գերհամակարգչի լիարժեք գործարկումն ու բնականոն աշխատանքն ապահովելուն: Ընդհանուր առմամբ, այս ծրագրի շրջանակներում 3,4 մլրդ դրամը հատկացվել է Երևանի պետական համալսարանում նոր գերհամակարգչային կենտրոնի ստեղծման և գերհամակարգչի ձեռք բերմանը: Կենտրոնը գործարկվել է: Բացառիկ հաշվարկային հզորություն ունեցող այս ենթակառուցվածքն առանցքային նշանակություն ունի արհեստական բանականության և բարձրարտադրողական հաշվարկների ոլորտներում կարողությունների ձևավորման համար: Նախաձեռնությունը միտված է նաև ներքին համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ փոխգործակցության խթանմանը:

- Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ձեռք բերված սարքերի (սարքավորումների) նվիրաբերության նպատակով՝ 14 շահառու կազմակերպությունների միջև կնքվել են սարքերի (սարքավորումների) նվիրաբերության մասին 40 պայմանագրեր:

- Երրորդ տարին անընդմեջ իրականացվել է մրցունակ գիտական ստորաբաժանումների հագեցվածությանն ուղղված մրցութային ծրագիր, որի բյուջեն ամբողջությամբ ուղղվել է փոքր և ամենօրյա կիրառություն ունեցող գիտական սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը: 2025 թվականի ամփոփված մրցույթի արդյունքում՝ 18 գիտական պետական կազմակերպությունների և բուհերի համար կգնվի 56 նոր գիտական սարք՝ ընդհանուր 1

միլիարդ 3 մլն դրամ արժողությամբ: 2024 թվականի մրցույթի արդյունքում ստացված ֆինանսավորվել է 22 գիտական պետական կազմակերպության և բուհի 59 հայտ՝ ընդհանուր 985,9 մլն դրամ ծավալով:

2025 թվականին շարունակվել և ամփոփվել է 2021 թվականի ապեսպավորում անցած գիտական և ճարտարագիտական աշխատողների բազային պետական աշխատավարձի աստիճանական աճը՝ 2018-2021 թվականների համեմատ, ըստ յուրաքանչյուր պաշտոնի/զարակարգի, ավելանալով 105%-ից մինչև 300%-ով: Մասնավորապես՝

- լաբորանտի կամ ճարտարագետի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 138 000 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 120 000 դրամի և 2021 թվականի միջինում 67 000 դրամի համեմատ,

- ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 179 000 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 156 000 դրամի և 202 1 թվականի միջինում 76 000 դրամի համեմատ,

- կրտսեր գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 210 000 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 180 000 դրամի և 2021 թվականի միջինում 85 800 դրամի համեմատ,

- գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 276 000 դրամ՝ 2024 թվականի միջինում 230 000 դրամի և 2021 թվականի նվազագույնը 90 400 դրամի համեմատ,

- ավագ գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 343 000 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 300 000 դրամի և 2021 թվականի միջինում 99 000 դրամի համեմատ,

- առաջատար գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 443 800 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 420 000 դրամի և 2021 թվականի միջինում 114 300 դրամի համեմատ,

- գլխավոր գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 552 000 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 500 000 դրամի և 2021 թվականի միջինում 138 100 դրամի համեմատ,

- գիտական խմբի ղեկավարի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 410 000 դրամ՝ 2024 թվականի միջինում 350 000 դրամի և 2021 թվականի նվազագույնը 129 100 դրամի համեմատ,

- գիտական ստորաբաժանման ղեկավարի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 477 200 դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 450 000 դրամի և 2021 թվականի միջինում 141 400 դրամի համեմատ:

Գիտության զարգացմանն ուղղված քայլերն իրենց արդյունքն են արձանագրում նաև միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում ՀՀ գիտնականների կողմից հրապարակումների թվի աճի տեսքով:

Մասնավորապես, վերջին տարիներին աճել է գիտական հրապարակումների թիվը, Վեբ օֆ Սայնս միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված, ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հայաստանյան գիտական հետազոտությունների ներկայացվածությունը (այդ թվում՝ ամսագրերի դասակարգման Q1 և Q2 քառորդներում)՝ կազմելով 1646 հոդված (նախորդող 2 տարիներին այդ թիվը կազմել է, համապատասխանաբար, 1419 և 1002 հոդված): Հատկանշական է նաև, ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտս (InCites) շտեմարանի տվյալների, Q1 և Q2 քառորդների ամսագրերում հրապարակումների թվի աճը՝ երկու տարվա ընթացքում 647-ից հասնելով 1041-ի (ընդհանուր թվի 58.9%-ը):

2025 թվականի հայաստանյան երեք ամսագրեր գրանցվել են միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, մասնավորապես՝ դեկտեմբերին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Journal of Architectural and Engineering Research (JAER) պարբերականը ներառվել է Scopus գիտատեղեկատվական շտեմարանում՝ որպես ինդեքսավորվող պարբերական: 2025 թվականին ինդեքսավորվել է նաև հումանիտար և հասարակագիտական ոլորտի 2 ամսագիր՝ ԵՊՀ հրատարակչության «Translation Studies: Theory and Practice» ամսագիրը, որը պաշտոնապես ընդգրկվել է «Scopus» գիտատեղեկատվական շտեմարանում 2025 թվականի մարտին, և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի «International Journal of Armenian Genocide Studies» գիտական ամսագիրը,որի ինդեքսավորման գործընթացն ավարտվել է 2025 թվականի հունիսին:

Ֆինանսավորման ընդհանուր ծավալների աճին զուգահեռ՝ 2025 թվականին շարունակվել է մրցութային սկզբունքով ֆինանսավորվող միջոցների ընդլայնումը: Մրցութային ֆինանսավորման համամասնությունը ընդհանուր ֆինանսավորման մեջ վերջին տասը տարիների ընթացքում կրկնապատկվել է՝ գերազանցելով 50%-ը :

2025 թվականին հայտարարվել է 11 դրամաշնորհային մրցույթ, ինչպես նաև ամփոփվել է ընթացիկ և նախորդ տարիներին հայտարարված 15 մրցույթների արդյունքները: Ընդհանուր առմամբ ստացված 863 հայտերից ֆինանսավորման են արժանացել 443-ը:

- Գիտական հետազոտությունների և գործնական փորձի միջոցով նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի, մեթոդների ստեղծմանը կամ դրանց կատարելագործման նպատակով, 2025 թվականին հայտարարվել է «Փորձարարական մշակումների նախագծեր 2025» մրցույթը, որի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերից մեկնարկել է փորձարարական մշակումների 17 նախագիծ՝ շուրջ 510 մլն դրամ ընդհանուր ծավալով:

- ՀՀ պետական կառավարման մարմինների կարիքներից բխող, սոցիալ-տնտեսական ազդեցություն ունեցող խնդիրների ուղղությամբ գիտահետազոտական նախագծերի աջակցման նպատակով, 2025 թվականին հայտարարվել է երկու մրցույթ՝ «Պետության պահանջարկի վրա հիմնված (Demand Driven) գիտահետազոտական նախագծեր 2025» (ֆինանսավորման է երաշխավորվել 32 նախագիծ՝ ավելի քան 950 մլն դրամ ծավալով) և «Նպատակային ծրագրեր - 2027» (հայտերն ընդունման փուլում են):

- Երկակի նշանակության ծրագրերի շրջանակում 2025 թվականին ֆինանսավորվել է 8 ծրագիր՝ շուրջ 320 մլն դրամ ընդհանուր գումարով (2024 թվականին՝ 8 նախագիծ 320 մլն դրամ ընդհանուր գումարի չափով, 2023 թվականին երկու մրցույթ՝ 15 նախագիծ):
- Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորման է երաշխավորվել 143 եռամյա հայտ՝ յուրաքանչյուրը մինչև 22,5 մլն դրամ ծավալով:
- Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության շրջանակներում 2025 թվականի մարտից հայաստանյան 9 կազմակերպություններում երիտասարդ գիտնականների 25 խմբեր օտարերկրյա գործընկերոջ պարտադիր ներգրավմամբ իրականացնում են 24 ամիս տևողությամբ նախագծեր՝ շուրջ 379 մլն դրամ ընդհանուր արժեքով: 2022 թվականին նույնանուն ծրագրով ֆինանսավորվել է 37 հայտ:
- Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրի 79 շահառու 2025 թվականի դեկտեմբեր ամսից հայաստանյան 19 կազմակերպություններում իրականացվում են մինչև 36 ամիս տևողությամբ նախագծեր՝ 717 մլն դրամ ընդհանուր արժեքով:
- Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում 45 գիտական հրատարակությունների ծախսերը փոխհատուցելու նպատակով տրամադրվել է շուրջ 46,3 մլն դրամ:

Միջազգային ծրագրերի, Սփյուռքի և օտարերկրյա գիտնականների ներուժի համախմբման շրջանակներում.

- 2025 թվականի առաջին անգամ հայտարարվել է Մոլդովայի Հանրապետության հետազոտությունների և մշակումների ազգային գործակալության հետ համագործակցությամբ համատեղ մրցույթ, որի արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել 4 նախագծեր՝ 8 մլն դրամ ծավալով,

- Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի հայտարարած համատեղ մրցույթի շրջանակում ֆինանսավորվել է 10 երկամյա նախագիծ՝ 50 մլն դրամ ընդհանուր ծավալով,

- Արտերկրի առաջատար կենտրոններում վերապատրաստման համար դրամաշնորհներ է ստացել 38 հետազոտող՝ շուրջ 133,5 մլն դրամ ընդհանուր ծավալով: Գիտաշխատողները վերապատրաստվում են 20 երկրների, այդ թվում՝ Գերմանիայի, Չեխիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Բելգիայի, Իտալիայի, Չինաստանի, Ֆրանսիայի, Իսպանիայի և այլ երկրների առաջատար գիտակրթական կենտրոններում,

- ՀՀ-ում հեռավար լաբորատորիաների ստեղծման 5-ամյա ծրագրի շրջանակում 2025թ. ֆինանսավորման է երաշխավորվել 12 նախագիծ՝ որոնցից 8 ԲՏՃՄ և 4 հասարակագիտական ու հումանիտար ոլորտներում՝ շուրջ 1,5 մլրդ դրամ ընդհանուր արժեքով: Արտերկրյա ղեկավարները 16 երկրների, այդ թվում՝ ԱՄՆ, Գերմանիայի, Ճապոնիայի, Շվեդիայի, Իտալիայի Ռուսաստանի և այլ երկրների քաղաքացիներ են: 2025 թվականին շահառու 12 նախագծերում ներգրավված էին սփյուռքի 5, իսկ 2024 թվականին շահառու 18 նախագծերում՝ 10 գիտնականներ,

- «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2025» ծրագրի 2 փուլերի արդյունքում 5-ամյա նախագծերի շրջանակներում հայաստանյան գիտական

կազմակերպություններ և բուհեր կտեղափոխվեն և մրցույթի արդյունքում նոր ստորաբաժանում կստեղծեն արտերկրի 8 գիտնականներ: Ծրագրին 2025 թվականին հատկացվել է 1,326 մլդ դրամ,

- Եվս 6 գիտաշխատող 2-ամյա հետդոկտորանտական նախագիծ կիրականացնի հայաստանյան գիտական կազմակերպություններում և բուհերում՝ «PostDoc-Armenia 2025» ծրագրի 2 փուլերի արդյունքում: Ծրագրին 2025 թվականին հատկացվել է 115,2 մլն դրամ:

Ներկայումս իրականացվող 160 խոշոր դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված են միջազգային առաջատար խորհրդատուներ կամ խմբի ղեկավարներ 5 աշխարհամասերի 32 պետություններից և ևս 252 միջազգային խորհրդատու՝ 4 աշխարհամասերի 36 պետություններից, ներգրավված է Կոմիտեի ֆինանսավորած ավելի փոքր դրամաշնորհային ծրագրերում:

ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի շրջանակում 2025 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ կողմից ներկայացվել է ընդհանուր 183 հայտ (նախորդ տարվա համեմատ 39 հայտով ավելի), կնքվել է ֆինանսավորման ևս 8 պայմանագիր՝ պայմանագրերի ընդհանուր թիվը հասցնելով 25-ի՝ շուրջ 8,33 մլն եվրո ընդհանուր բյուջեով, որը գերազանցում է 2021-2024 թվականների ընդհանուր բյուջեն (կազմում է 7,6 մլն եվրո) 9.6 %-ով:

Շարունակվել է պետական բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրը, որն իրականացվել է օտարերկրյա 11 պետություններում գործող 14 գիտակրթական կառույցներում:

Մատենադարանի կողմից 2025 թվականի հուլիսի 9-12-ը կազմակերպվել է արդեն ամենամյա բնույթ ստացած Հայագիտական միջազգային 2-րդ կոնգրեսը, որի նիստերն ընթացել են Մատենադարանում և Գեղարքունիքի մարզում: Ավելի քան երկու տասնյակ երկրներից Հայաստան են ժամանել հեղինակավոր հայագետներ ու միջնադարագետներ, հոգևոր-ձեռագրական կենտրոնների ներկայացուցիչներ:

2025 թվականի դեկտեմբերի 12–13-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից Լեհաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանում տեղի է ունեցել օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների երկրորդ համաժողովը, որին մասնակցել են նշյալ հայագիտական կենտրոնների հայագետներ, ինչպես նաև ՀՀ կրթագիտական կառույցների ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում քննարկվել են հայագիտական կենտրոնների գործունեության զարգացման, գիտական համագործակցության, դրամաշնորհային ծրագրերում ներգրավվածության և կայուն միջհամալսարանական կապերի ամրապնդման հարցեր: Առանձին անդրադարձ է կատարվել հայոց լեզվի թվայնացման քաղաքականությանը և հայերենի ուսուցման, ստուգման ու գնահատման միջազգային չափորոշիչների մշակմանը:

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2024 թվականին մեկնարկած «Հայերենի ուսուցում, ստուգում և գնահատում» ծրագիրը 2025 թվականին ընդլայնվել է՝ ներառելով նաև հայախոսների համար հայերենի իմացության ստուգման ու գնահատման միասնական համակարգ ստեղծելու աշխատանքները: Միջազգային լավագույն փորձի ներդրմամբ իրականացվող այս ծրագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են «Ոչ հայախոսների համար հայերենի (արևելահայերենի) իմացության մակարդակների պետական չափորոշիչները»: Մշակվել են նաև առաջադրանքների նմուշօրինակները և ստուգման առցանց համակարգի հայեցակարգը: ՀՀ ԿԳՄՍՆ Լեզվի կոմիտեի համակարգմամբ իրականացվող ծրագրի շրջանակում, անցկացվել են աշխատանքային քննարկումներ նաև Ֆրանսիայի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտի (ԻՆԱԼԿՈ) հայագիտական ծրագրի պատասխանատուների հետ՝ Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության՝ փոքրամասնությունների լեզուների աջակցության ծրագրի շրջանակում արևմտահայերենի իմացության մակարդակների չափորոշիչների մշակման վերաբերյալ: «Իզմիրլյան» բարեգործական հիմնադրամի համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրով ակնկալվում է, որ մինչև 2030 թվականը կգործարկվի հայերենի ուսուցման ու հավաստագրման միասնական համակարգ՝ իր էլեկտրոնային հարթակով, բովանդակային պաշարով ինչպես նաև հավաստագրման համակարգով:

2025 թվականին սփյուռքի 25 երկրի կրթօջախներից ընդհանուր թվով ստացվել է ուսումնական նյութերի ստացման 140 հայտ, որից բավարարվել է 129-ը: Ձեռք է բերվել 46 224 կտոր ուսումնական գրականություն և տրամադրվել է 13 պետության 129 կրթօջախի, այդ թվում՝ Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարությանը փոխանցվել է 8525 կտոր գրականություն: Տրամադրված ուսումնական գրականության քանակը 15%-ով ավելի է նախորդ տարվա համեմատ:

Շարունակվել են նաև սփյուռքի դպրոցների ուսումնական նյութերի էլեկտրոնային շտեմարանի հարստացման աշխատանքները՝ ի դեմս նոր դասագրքերի և նյութերի:

2025 թվականի ընթացքում Հայաստանում վերապատրաստվել են 62 սփյուռքահայ ուսուցիչներ՝ 8 երկրից: Վերապատրաստմանը մասնակցելու համար ստացվել է 73 մասնակցության հայտ 14 երկրներից, որոնցից 11 մասնակիցներ, աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված, չեն կարողացել մասնակցել ծրագրին:

2025 թվականին «Հայաստանի միգրանտ ընտանիքների դպրոցականների հայոց լեզվի իմացության բարելավում» ծրագրի շրջանակում 208 աշակերտ հնարավորություն է ստացել սովորել հայոց լեզու:

«Կրթամշակութային աջակցություն սփյուռքի համայնքներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2025 թվականի հուլիսի 12-ին Գանձա գյուղում տեղի է ունեցել Վահան Տերյանի տուն-թանգարանի վերականգնված հուշային հատվածի հանդիսավոր բացումը, որին մասնակցել են մոտ 10 000 հյուրեր:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ամբողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրում երիտասարդական քաղաքականության մասով ամրագրված ծրագրերն ու միջոցառումները՝ ուղղված երիտասարդների ներուժի բացահայտմանն ու զարգացմանը, որոշումների ընդունմանը երիտասարդների մասնակցության բարձրացմանը, մարզաբնակ երիտասարդների համար երիտասարդական միջավայրերի ձևավորմանը, ակտիվ քաղաքացիության ընդլայնմանը և այս ամենի համար իրավական հիմքերի ստեղծմանը:

2025 թվականի մարտին ընդունվեց և ուժի մեջ մտավ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, որը ոլորտը կարգավորող առաջին օրենքն է՝ հանդիսանալով նաև շրջանակային փաստաթուղթ, որը սահմանում է պետական երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները, քաղաքականության սուբյեկտները, նրանց լիազորությունների տիրույթը, փոխհարաբերությունների հիմունքները:

2025 թվականին շարունակվել է դեռևս 2022 թվականից ի վեր մեկնարկած՝ պետություն-քաղաքացիական հասարակություն-տեղական ինքնակառավարման մարմին եռակողմ համագործակցության ձևաչափով մարզերում երիտասարդական կենտրոնների ձևավորման գործընթացը, որի շրջանակներում արդեն իսկ ձևավորվել էին 9 կենտրոններ, իսկ 2025թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով դրամաշնորհներ են տրամադրվել ևս 5 բնակավայրերում (Ճամբարակ, Նոյեմբերյան, Հրազդան համայնքներում և Աղավնաձոր (Ծաղկաձոր համայնք), Վերիշեն (Գորիս համայնք) բնակավայրերում) երիտասարդական միջավայրերի ձևավորման համար, որոնք կգործեն 2026 թվականից:

2025 թվականին երիտասարդական կենտրոնների ընդհանուր այցելությունների թիվը կազմել է շուրջ 33 000 երիտասարդ, ինչն ավելի քան երեք ու կես անգամ գերազանցում է 2024 թվականի գործող 5 կենտրոնների համապատասխան 8 600 ցուցանիշը:

Ընթացել են համայնքային մշակութային կենտրոնի, գրադարանի և երիտասարդական կենտրոնի գործառույթները ներառող բազմաֆունկցիոնալ համալիր կենտրոնների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: 2026 թվականին նախատեսվում է մեկնարկել շինարարական աշխատանքները:

2025 թվականին իրականացվել են մեդիագրագիտության բարձրացման, սոցիալական ձեռներեցության զարգացման, երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացման և այլ թեմաներով պետական դրամաշնորհային տարաբնույթ ծրագրեր, որոնց մասնակցել է շուրջ 5 520 երիտասարդ, ինչը 1.5 անգամ ավելին է նախորդ տարվա ցուցանիշից:

Շարունակվել են երիտասարդների իրազեկվածության բարձրացմանը միտված միջոցառումները, այդ թվում՝ առողջ ապրելակերպի, ակտիվ քաղաքացիության, թրաֆիքինգի, երիտասարդական աշխատանքի ճանաչելիության, տեղական, համապետական և միջազգային մակարդակով երիտասարդների կարողությունների զարգացման վերաբերյալ հնարավորությունների մասին՝ շուրջ 5 500 երիտասարդի թիրախավորմամբ: Իրազեկման նպատակին միտված տեղեկատվական արշավների, միջոցառումների, ինչպես նաև իրազեկման կայքերի դիտելիությունը կազմում է ավելի քան 359 200 դիտում, որը 19%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Ապարանի համայնքապետարանի և տարբեր տեղական ու միջազգային գործընկերների հետ միասին 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ապարանում իրականացվել են երիտասարդների կարողությունների զարգացման, իրազեկման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման տարաբնույթ միջոցառումներ, որոնց մասնակցել է ավելի քան 6 300 երիտասարդ: Ապարանում՝ որպես երիտասարդական մայրաքաղաք, 2025 թվականի ապրիլին կազմակերպվել են նաև Քաղաքացու օրվան նվիրված տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետի բանախոսությունը:

Շարունակվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը՝ ուղղված երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը: Ընդհանուր առմամբ 2010 թվականից մինչ 2025 թվականի դեկտեմբերը ներառյալ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի հնարավորություններից օգտվել է 9 905 ընտանիք, որից 3 967-ը՝ Երևան քաղաքում, իսկ 5 938-ը՝ ՀՀ մարզերում: 2025 թվականին ծրագրի շահառուների թիվը համալրվել է ևս 760 ընտանիքով, որոնցից 689-ը բնակարան/բնակելի տուն ձեռք է բերել պետական սուբսիդավորմամբ՝ երկրորդային շուկայից՝ 511-ը ՀՀ մարզերում, 178-ը Երևանում: Եվս 71 ընտանիք ձեռք է բերել բնակարան/բնակելի տուն առաջնային շուկայից՝ 57-ը Երևանում, 14-ը՝ ՀՀ մարզերում:

Ընդլայնվել է երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցությունը, որն ընդգրկում է ինչպես բազմակողմ (ԱՊՀ, ԵԽ, ԵՄ) և երկկողմ ձևաչափերով համագործակցություն (այդ թվում՝ Հայաստան-Վրաստան, Հայաստան-ՌԴ երիտասարդական ֆորումներ), այնպես և պետական բյուջեի միջոցներով ավիատոմսի փոխհատուցման ճանապարհով արտերկրի երիտասարդական միջոցառումներին Հայաստանի երիտասարդների մասնակցության հնարավորությունների ընդլայնում (2025 թվականին՝ 18 մասնակից) և արտերկրում կարողությունների զարգացման հնարավորությունների մասին իրազեկության բարձրացում:

Այս առումով 2025 թվականին հիշարժան են Հայաստանի և Վրաստանի երիտասարդների մասնակցությամբ երիտասարդական հուլիսյան հավաքը (30-ական մասնակից) ՀՀ երիտասարդական մայրաքաղաք Ապարանում, ամառային երիտասարդական ճամբարը (25 մասնակից ՀՀ-ից) Վրաստանի Անակլիա հանգստավայրում, ինչպես նաև՝ ԱՊՀ Երիտասարդական խորհրդի նիստը և «100 գաղափար ԱՊՀ-ի համար» մրցույթի՝ նոյեմբերին կայացած եզրափակիչ փուլի ամփոփումը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում, որտեղ Հայաստանը մեկամյա ժամկետով ստանձնեց ԱՊՀ Երիտասարդական խորհրդի նախագահությունը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Կապանը հռչակվել է 2026 թվականի ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք:

ՍՊՈՐՏ

2025թ. սպորտի ոլորտում աշխատանքներն իրականացվել են սպորտի տնտեսականացման, պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնման, ոլորտի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, բարձր նվաճումներ ունեցող մարզիկների և ֆիզիկական առողջ ակտիվության խրախուսման, մարզական ենթակառուցվածքների ստեղծման/բարելավման ուղղություններով:

2025 թվականին ստեղծվել են նախադրյալներ սպորտի տնտեսականացման ուղղությամբ: Իրականացվել են Եղեգնաձոր, Մարտունի և Արարատ քաղաքներում պետություն-մասնավոր գործընկերությամբ արդիական մարզագույքով և այլ պայմաններով հագեցած, միջազգային չափանիշներին համապատասխանող տիպային մարզահամալիրների նախագծման աշխատանքները: Նախատեսվում է, որ տիպային մարզահամալիրները կկառուցի պետության միջոցներով՝ մրցույթով ընտրված կազմակերպության կողմից՝ հանձնելով մասնավորին հետագա հավատարմագրային կառավարման՝ հստակ չափորոշիչներով:

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում ընդլայնվել է 2024 թվականից մեկնարկած՝ մասնավոր լողավազաններում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների պետական ֆինանսավորման ծրագիրը, որի շահառուների թիվը 2025թ. կազմել է 198՝ մեկնարկային տարվա 22 շահառուի փոխարեն՝ հասանելի դառնալով Արագածոտնում, Արմավիրում, Կոտայքում, Տավուշում և Լոռիում: Միաժամանակ, 2025թ. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքում իրականացվել են փոփոխություններ, որոնք հնարավոր են դարձրել մասնավորի ենթակառուցվածքներում նաև այլ մարզաձևերով զբաղվելը խթանելը: Մարզաձևերի ընդլայնումը կիրականացվի 2026-ին:

Մեկնարկել է սպորտային խոշոր ենթակառուցվածքների գործարկման բիզնես մոդելի մշակումը, որն իրականացվում է Վանաձոր քաղաքի մարզադաշտի՝ ՈՒԵՖԱ-ի ստանդարտներին համապատասխան վերակառուցման նախագծումն ու ծրագրի ղեկավարումը ստանձնած միջազգային փորձառու կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում:

Միաժամանակ, պետությունը տարվա ընթացքում աջակցել է նաև մասնավորի կողմից մարզական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին.

Տեղի է ունեցել Յուվենտուս ֆուտբոլային ակումբի հայաստանյան ակադեմիայի հիմնարկեքը: Ակադեմիան գործելու է երեք հասցեներում՝ Երևանում և Կոտայքի մարզում՝ Հայաստանում ներդնելով ֆուտբոլային կրթության միջազգային փորձն ու ստանդարտները:

Կառավարությունն աջակցել է Նոա ֆուտբոլային ակումբի կողմից Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում ՈՒԵՖԱ-ի ստանդարտներին համապատասխան մարզադաշտի և այլ ենթակառուցվածքների զարգացմանը:

Համապատասխան տարածք է տրամադրվել նաև Կոտայքի մարզում համահայկական խաղերի մարզական ավանի կառուցման համար:

Ոլորտի կառավարման բարեփոխումների համատեքստում՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որով կարգավորվում են ֆիթնես կենտրոնների գործունեությունը և վերջիններիս մարզիչների հավաստագրման կարգը, ընդլայնվում են ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները:

Տեղեկատվական համակարգերի գործակալության կողմից հաստատվել է սպորտի ոլորտում թվայնացման հայեցակարգը, որի համաձայն մեկնարկել են Սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները. ստեղծվել և փորձարկվում է մարզադպրոցների բաղադրիչը, ընթացքում է մարզական ֆեդերացիաների բաղադրիչի

մշակումը: Տեղեկատվական համակարգը ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության, ճշգրիտ վիճակագրության վարման արդիական գործիք է հանդիսանալու:

Ֆեդերացիաների հետ համագործակցությունը 2024 թվականից իրականացվում է նոր ձևաչափով՝ սահմանվել են հստակ չափորոշիչներ, ինչպես նաև հավելյալ գործակիցներ՝ կախված տվյալ մարզաձևում մարզիկների ցուցաբերած արդյունքներից: 2025թ. 5 ֆեդերացիաների ֆինանսական և հաշվապահական գործառույթներն առաջին անգամ իրականացվել են Սպորտի կառավարման կենտրոնի կողմից՝ նպաստելով գործընթացների արդյունավետության բարձրացմանը: 2026 թվականից Սպորտի կառավարման կենտրոնի կողմից վարվող ֆեդերացիաների թիվը կկրկնապատկվի:

Շարունակվել են բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսման ծրագրերը, ինչպես նաև ներդրվել են նոր ծրագրեր:

2025թ. ՀՀ մարզիկները նվաճել են 357 մեդալ, որից 114-ը ոսկե, 113-ը արծաթե և 130-ը բրոնզե: Մեդալներից 42-ը կամ 12%-ը նվաճել են կանայք: 2024 թվականից սկսած նվաճած մեդալների համամասնության մեջ գերակշռում են ոսկե մեդալները՝ կազմելով 32%, և կրկնապատկվել են կին մարզիկների նվաճած մեդալները: Հաշմանդամություն ունեցող մարզիկները նվաճել են 37 մեդալ:

Տարվա ընթացքում 120 մարզիկ և մարզիչ ստացել են պատվովճարներ՝ ընդհանուր 15.5 մլն ՀՀ դրամի չափով:

2025 թվականին ցուցաբերած մարզական արդյունքների համար անվանական թոշակ է հատկացվել (այդ թվում նաև վարկանիշի ձեռք բերման համար) 432 մարզիկների և մարզիչների:

2025 թվականին միանվագ տարեվերջյան պարգևատրում է ստացել 189 մարզիկ, մասնավորապես՝ 50 մարզիկ ստացել է մինչև 500 000 ՀՀ դրամ, 31 մարզիկ՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ և 108 մարզիկ՝ 1 մլն դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իրենց գրանցած հաղթանակների համար:

2025 թվականին Կառավարությունը ներդրեց նաև Լոս Անջելեսի օլիմպիական խաղերին նախապատրաստվելու աջակցության ծրագիր, որը կգործի 2026 թվականից: Ծրագրի համաձայն 2026թ. հունվարից մինչև 2028թ. օգոստոս սպորտային նպաստ կտրամադրվի մարզիկներին, հավաքականների մարզիչներին, անձնական մարզիչներին, բժիշկներին և մերսողներին՝ հնարավորություն ընձեռելով կենտրոնանալ մարզիկների լավագույն մարզավիճակի վրա:

Իրականացվել է տարվա լավագույն մարզիկների մրցույթը, որը 2024 թվականի համար առաջին անգամ տեղի ունեցավ վերափոխված ձևով: Նոր անվանակարգերը տեսանելի են դարձնում երիտասարդ մարզիկներին, հաշմանդամություն ունեցող մարզիկներին, կանանց, թիմային մարզաձևերը, նաև մարզիչներին, գնահատում են մարզիկների կողմից պետության հանրահռչակումը, հանդիսատեսի համակրանքը, ինչը այս մրցույթը դարձնում է շատ ավելի ընդգրկուն և բովանդակալից: 2025 թվականին ևս հաղթողները պարգևատրվել են 6,25-ական մլն դրամով:

Նոր քայլեր են իրականացվել Հայաստանը սպորտային քարտեզի վրա ամրապնդելու ուղղությամբ: 2025 թվականին Հայաստանում անցկացվել են.

- Կարատեի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը (49 երկիր, շուրջ 1000 մարզիկ և պատվիրակ),
- Բասկետբոլի Եվրոպայի մինչև քսան տարեկանների Բ դիվիզիոնը (21 երկիր, շուրջ 1000 մասնակից),
- Վոլեյբոլի Եվրոպայի երիտասարդների առաջնության եզրափակիչ փուլը (16 երկիր, 1500 մասնակից),
- Տափօղակով հոկեյի աշխարհի Դ դիվիզիոնը (6 երկիր, 200 մասնակից):

Ջերմուկում, ավելի քան 10 տարի ընդմիջումից հետո, կայացել են համահայկական ձմեռային խաղերը, որոնց մասնակցել են ավելի քան 1340 պատվիրակ աշխարհի 18 պետությունների 88 քաղաքներից:

Հայաստանի և Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիաները համատեղ հայտ են ներկայացրել 2029 թվականի ֆուտբոլի 20 տարեկանների աշխարհի առաջնությունը հյուրընկալելու համար:

Հեծանվավազքի միջազգային ֆեդերացիային է ներկայացվել 2026 թվականին Հայաստանում բազմօրյա հեծանվավազքի միջազգային մրցաշար անցկացնելու հայտը, որը հաստատվել է միջազգային օրացույցում:

Միաժամանակ, սպորտի միջազգային մրցաշարերը խթանելու համար Հայաստանը նախաձեռնել է «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացումը, որը շրջանառման փուլում է:

2025 թվականը նաև առողջ ապրելակերպի և ֆիզիկական ակտիվության խրախուսման նոր գործիքների ներդրման տարի էր: Մասնավորապես.

Վարչապետի գավաթի մրցաշարերը լրացվել են երկու խաղային ձևերով. Դպրոցականների բասկետբոլի լիգայով, որին առաջին անգամ մասնակցել են ավելի քան 8.000 երեխաներ և դպրոցականների վոլեյբոլի լիգայով, որին առաջին անգամ մասնակցել են ավելի քան 5.000 երեխաներ, իսկ վարչապետի լողի գավաթը վերափոխվել է դպրոցականների շրջանում անցկացվող լողի մրցաշարի:

Այսպիսով, Վարչապետի գավաթի շրջանակներում կազմակերպվում են դպրոցականների հինգ մարզաձևերի մրցաշարեր՝ հեծանվավազքի, սեղանի թենիսի, թիմային խճուղավազքի, լողի, վոլեյբոլի, բասկետբոլի, որոնց 2025թ. մասնակցել է ավելի քան 25.000 մարդ՝ 2.6 անգամ գերազանցելով 2024թ., և 3.8 անգամ՝ 2023թ. մասնակցության ցուցանիշները: Հանրապետության դպրոցների շուրջ 42%-ը մասնակցել է վարչապետի գավաթի շրջանակներում անցկացվող մրցաշարերից առնվազն մեկին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շուրջ 6.500 հեծանիվներ ձեռք բերելու և բոլոր դպրոցներին տրամադրելու արդյունքում, «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի մրցաշարին մասնակցել է ավելի քան 4.000 աշակերտ, որը 3 անգամ ավել է 2024թ. ցուցանիշից, իսկ դպրոցների 68% ընդգրկվածությունը՝ ամենաբարձր մասնակցությունն է այս մրցաշարերում:

ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվել են նաև ուժային կառույցների միջև բանակային խաղերը, որոնց վերջին երկու տարիներին մասնակցել է ուժային և իրավապահ կառույցների 346 աշխատակից՝ կրկնակի գերազանցելով նախորդող տարիների ցուցանիշները:

Անցկացվել են նաև ուսանողական խաղեր 12 մարզաձևից՝ 20 բուհի 1.000 ուսանողների մասնակցությամբ: Միաժամանակ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունմամբ ստեղծվել են նախադրյալներ և պայմաններ ուսանողական սպորտի զարգացման համար: Մասնավորապես, օրենքը խթանում է բուհերում ուսանողական մարզական ակումբների գործունեությունը, հստակեցնում ուսանողների մարզական ակտիվության կարևորությունը՝ որպես ուսումնառության մաս:

Տարվա ընթացքում անցկացվել է նաև մարզական մասսայական 4 միջոցառում, որոնց մասնակցել է ավելի քան 38 700 մարդ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ Վարչապետի գավաթի մրցաշարերին, ՀՀ վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև անցկացվող ռազմամարզական խաղերին և այլ մարզական մասսայական միջոցառումներին, 2025 թվականին մասնակցել է ավելի քան 64000 մարդ՝ ապահովելով 27%-ով ավելի մասնակցություն 2024 թվականի նկատմամբ:

2025 թվականին առաջին անգամ հաշվարկվել և հրապարակվել է մարզերի և Երևանի մարզական վարկանիշային սանդղակը, որով գնահատվում է մարզական ակտիվությունը ըստ հետևյալ ցուցանիշների

- մասնակցություն սպորտի ոլորտում նախարարության կողմից կազմակերպվող մասսայական սպորտի միջոցառումներին և մրցաշարերին,
- դպրոցահասակ երեխաների ներգրավվածություն մարզադպրոցներում,
- կամավոր ատեստավորված ֆիզկուլտուրայի ուսուցիչների համամասնություն,
- մարզադպրոցների կամավոր ատեստավորված մարզիչ-մանկավարժների համամասնություն:

2024 թվականի ամփոփման արդյունքներով՝ առաջին տեղը զբաղեցրել է Կոտայքի մարզը, երկրորդ տեղը՝ Սյունիքի մարզը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Լոռու մարզը: Սանդղակի առաջին երեք տեղերը զբաղեցնողները ստացան համապատասխանաբար 8 մլն դրամ, 5 մլն դրամ և 3 մլն դրամ արժողությամբ մարզագույք:

Հանրության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով նախաձեռնվել և իրականացվել է հանրային հարցում ավելի քան 1600 հոգու շրջանում՝ Եվրոբարոմետրի համապատասխան մեթոդաբանությանը համապատասխան՝ ստանալով նախնական տվյալներ հանրային վարքագծի վերաբերյալ՝ հետագա քաղաքականությունների մշակման համար: Նախատեսվում է, որ հետազոտությունը կդառնա ամենամյա՝ արդիական տվյալներ տրամադրելով արդյունավետ քաղաքականությունների համար:

Անցկացված հարցման արդյունքներով հարցվածների շրջանում ամեն տասից չորսը զբաղվում է ֆիզիկական վարժություններով կամ սպորտով, ընդ որում ամենից հաճախ դա քայլքն է: Միևնույն ժամանակ հարցվածները օրվա մեջ միջինում 5,5 ժամ անցկացնում են նստած, ինչն ակնհայտ խոչընդոտ է առողջ ապրելակերպի համար: Կարևոր է, որ հարցվածների ավելի քան 78%-ը կարևորում է ֆիզիկական ակտիվությունը առողջության

համար, ինչը լավ ներուժ է՝ առողջ ապրելակերպի հետագա խրախուսումը հանրության շրջանում իրականացնելու համար:

2025 թվականին Կառավարությունը ներդրել է նաև բուհերի և քոլեջների դասախոսների և ուսանողների համար հեծանիվների ապառիկ ձեռքբերման դեպքում տոկոսադրույքները սուբսիդավորելու մեխանիզմ, որն ուղղված է թե՛ ֆիզիկական առողջ ակտիվության խրախուսմանը, թե՛ նաև հեծանիվը՝ իբրև այլընտրանքային փոխադրամիջոց գործածելու վարքագծի տարածմանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնել է հանրային արշավներ ուսումնական հաստատություններում՝ ծրագիրը խթանելու, իրազեկելու, հեծանվավարության անվճար դասընթացների կազմակերպելու համար:

Խրախուսվել են սպորտի մասին ֆիլմերը: Վերջին երկու տարում հանդիսատեսին է ներկայացվել սպորտի մասին երկու ֆիլմ և մեկ սերիալ, որոնք մոտիվացնում են սպորտով զբաղվելը: Դրանցից Նազիկ Ավդալյանի մասին պատմող՝ «Մեդալի հակառակ կողմը» ֆիլմի պարագայում, ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 40 մլն դրամ՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարի 100%-ը: Ֆիլմը մեծ արձագանք է ստացել, ցուցադրվել է 11 երկրում:

Շարունակվել են սպորտի ոլորտում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը: Ընդհանուր առմամբ, տարբեր ծրագրերի շրջանակներում 2025 թվականի դրությամբ ընթացքում են եղել շուրջ 100 սպորտային ենթակառուցվածքներին ուղղված աշխատանքներ, որոնց թվում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ ՀՀ մարզերում 9 մարզադպրոցների, Երևանի քաղաքապետարանի կողմից 60 ֆուտբոլի փոքր դաշտերի և երկու մարզադպրոցների վերանորոգում, շուրջ 16 մարզադպրոցների և մարզահամալիրների վերակառուցում ու կառուցում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև 10 Վորքաութ մարզահրապարակների կառուցում, որից 2-ական՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի, 3-ական՝ Սյունիքի և Տավուշի մարզերում:

Թվարկված սպորտային ենթակառուցվածքներին պետք է ավելացնել նաև դպրոցաշինության շրջանակներում ավելի քան 200 դպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների կառուցումն ու հիմնանորոգումը, ինչը վկայում է, որ սպորտային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ հսկայածավալ ջանքեր են ներդրվում:

Թվարկված սպորտային ենթակառուցվածքներից ավարտական փուլում են գտնվում՝ Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի մարզադպրոցի և Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի մարզադպրոցի նոր շենքերի կառուցման աշխատանքները:

Պետության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են մեր անվանի մարզիկների անունները կրող մարզակառույցները, այդ թվում՝

- Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազան (շինարարության փուլում է),
- Արթուր Ալեքսանյանի անվան մարզական համալիրը (շինարարության փուլում է),

- Արթուր Աբրահամի անվան մարզադպրոցը (մեկնարկել է շինարարությունը),
- Ռոման և Մալխաս Ամոյանների անվան մարզադպրոցը (նախագծվում է),
- Վիկ Դարչինյանի անվան մարզադպրոցը (նախագծման աշխատանքների նախապատրաստական փուլում է),
- Ստեփան Սարգսյանի անվան ըմբշամարտի մարզադպրոցը (նախագծման աշխատանքների նախապատրաստական փուլում է),
- Յուրի Սարգսյանի անվան մարզադպրոցը (հիմնանորոգման նախագծումը նախապատրաստական փուլում է):

ՄՇԱԿՈՒՅԹ

2025 թվականին մշակույթի ոլորտում շեշտադրվել են մշակույթի տնտեսականացման ինստիտուցիոնալ կառուցակարգերի ստեղծումը, այդ թվում՝ միտված մշակութային կազմակերպությունների սեփական եկամուտների աճին, մշակութային արտադրանքի և մասնավորի հետ համագործակցության նոր ձևերին, ինչպես նաև՝ ոլորտի թվայնացումը, մշակութային ժառանգության պահպանումն ու հանրահռչակումը, մշակութային կյանքի ապակենտրոնացումը և միջազգայնացումը:

Մշակույթի տնտեսականացման ինստիտուցիոնալացման և ոլորտի համակարգային բարեփոխումների առաջմղման նպատակով՝ 2025 թվականին ընդունվել է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքը և վերջինիս կիրարկումն ապահովող 3 ենթաօրենսդրական ակտ, որոնցով կարգավորվում են ինքնազբաղ արվեստագետների գործունեությունը, սահմանվում են ստեղծագործական գործունեության տնտեսական արդյունավետության նոր հիմքերն ու պայմանները:

Շարունակվել է մշակութային հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրման գործընթացը, որը հնարավորություն է տվել ավելի ինտենսիվ մշակութային գործունեություն ծավալել. մասնավորապես՝ օպերային թատրոնում կրկնակի ավելացել է ցուցադրվող ներկայացումների քանակը (2023 թվականի 130-ի փոխարեն դառնալով՝ 260 ներկայացում), կրկնապատկվել է նաև հանդիսատեսի քանակը 90 000-ից հասնելով 180 000 հանդիսատեսի՝ ապահովելով մինչև 20% տարեկան եկամուտների աճ և 37% վարձատրության բարձրացում: Տիկնիկային թատրոնում ներկայացումների քանակն ավելացել է 334-ով (497-ի փոխարեն հասնելով 831-ի), զգալիորեն ավելացել է նաև հանդիսատեսի քանակը՝ 73 000-ից հասնելով 119 600-ի, ապահովելով մինչև 35% տարեկան եկամուտների աճ և մինչև 50% աշխատավարձերի բարձրացում: Կամերային թատրոնում ներկայացումների քանակն ավելացել է 78-ով (165-ի փոխարեն հասնելով 243-ի), զգալիորեն ավելացել է նաև հանդիսատեսի քանակը՝ 19 342-ից հասնելով 29 390-ի, ապահովելով մինչև 22% տարեկան եկամուտների աճ (15% փոխարեն) և մինչև 50% աշխատավարձերի բարձրացում:

Ֆինանսավորման նոր մոդելի հեռանկարով սեփական եկամուտների աճ են գրանցել գրեթե բոլոր թատերահամերգային կազմակերպությունները, այդ թվում՝ մարզային թատրոնները՝ մինչև 30%-ով: 2026 թվականից նոր մոդելին կմիանա ևս 1 թատերահամերգային կազմակերպություն:

Ընդհանուր առմամբ, թատրոնների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 1,75 մլրդ դրամով կամ 1.5 անգամ, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 1,15 մլրդ ՀՀ դրամից դարձել է 2,9 մլրդ ՀՀ դրամ՝ 25%-ից աճելով 38%-ի:

Համերգային կազմակերպությունների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 745 մլն դրամով կամ 1.5 անգամ, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 486 մլն ՀՀ դրամից դարձել է 1,23 մլրդ ՀՀ դրամ՝ 12%-ից աճելով 24,5%-ի:

Հաստատվել են կինոյի ներդրումների մասնակի վերադարձի մեխանիզմները՝ ստեղծելով կինոոլորտի տնտեսականացման և զարգացման նոր, արդյունավետ հնարավորություններ: Ընդ որում, չնայած մեխանիզմը գործարկվել է 2025-ի մայիսից, սակայն արդեն իսկ ստացվել են 10 հայտեր՝ 1,4 մլրդ ՀՀ դրամ ծավալով, ինչը նշանակում է, որ ներդրումների մասնակի վերադարձը ոլորտի համար պահանջված մեխանիզմ է և կարող է էապես խթանել կինոյի ոլորտում ներդրումները: Ներկայացված 10 հայտերից արդեն հաստատված են 2 ֆիլմի հայտեր, ևս 8-ը դիտարկման փուլում են:

2025 թվականին ներդրվել է մշակութային արժեքների և առարկաների շուկայի ձևավորման նոր ինստիտուցիոնալ մեխանիզմ, մասնավորապես, ընդունվել են «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» ՀՀ օրենքը և աճուրդային տների լիցենզավորման կարգը: Ընթացքում են հեղինակավոր աճուրդային տների հետ համագործակցության մասով շուկայի վերլուծության աշխատանքները:

Մեկնարկել են թանգարանների հուշանվերային արտադրանքի և վաճառասրահի ենթակառուցվածքի զարգացման աշխատանքները, որոնց շրջանակում հաստատվել է 47.6 մլն դրամ արժողությամբ 10 անուն հուշանվերային արտադրանքի շարքը 6 թանգարանի համար: Թանգարանների սեփական եկամուտներում ավելացել են հուշանվերների վաճառքի մասնաբաժինները՝ կազմելով տարեկան միջինում 5,2 մլն դրամ կամ տարեկան ընդհանուր եկամտի 10%-ը և առավելագույնը՝ 32,2 մլն դրամ կամ տարեկան ընդհանուր եկամտի 42.3%-ը:

Թանգարանների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 859 մլն դրամով կամ 112%-ով, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 770 մլն դրամից դարձել է 1,63 մլրդ դրամ՝ 26%-ից աճելով 37.9%-ի:

2025 թվականին նոր թափ են ստացել ոլորտի թվայնացման գործընթացները: Մեկնարկել են ոլորտի 4 էլեկտրոնային համակարգերի ներդրման աշխատանքները: Մասնավորապես, լավարկվել և ընդլայնվել է Թանգարանների էլեկտրոնային տոմսային միասնական համակարգը, որի արդյունքում համակարգին միացել են ևս 18 թանգարանների մասնաճյուղեր՝ համակարգին միացած թանգարանների և մասնաճյուղերի թիվը հասցնելով 44-ի: 2026 թվականին համակարգին միացած թանգարաններում կտեղադրվեն 20 սարքավորումներ և 10 գերզգայուն QR կարդացող սարքեր:

Մեկնարկել են Արհեստագործության թվային պորտալի արդիականացման աշխատանքները, հավաքագրված է 150 վարպետի մասին տեղեկություն: Պորտալը

հանդիսանալու է ինչպես ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարան, այնպես էլ՝ գործող վարպետների տեսանելիության բարձրացման և նրանց արտադրանքի վաճառքի հարթակ:

Շարունակվել է հուշարձանների էլեկտրոնային շտեմարանի գործարկումը. 2025թ. դրությամբ շտեմարանը ներառում է 800 հուշարձանի տվյալներ, որը մինչև 2027 թվականի թիրախի 84%-ն է:

Գործարկվել է թատերահամերգային կազմակերպությունների տոմսերի վաճառքի միասնական հարթակը մասնավորի հետ համագործակցությամբ. այն փորձնական ձևաչափով գործում է 2 կազմակերպությունում: Միասնական հարթակն էապես կկրճատի ոլորտում հնարավոր ստվերը, կբարձրացնի ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, թույլ կտա վարել ճշգրիտ վիճակագրություն և մշակել տվյալների վրա հիմնված քաղաքականություն:

Հաստատվել է «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի էլեկտրոնային համակարգի հայեցակարգը, որն ինքնաշխատ կդարձնի համակարգի գործունեությունը՝ կրճատելով վարչարարությունը և միաժամանակ մեծացնելով համակարգի մոնիթորինգի հնարավորությունները:

Մշակութային կրթության խթանման համատեքստում՝ էապես բարելավվել են «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակում այցելությունները թանգարաններ և թատրոններ՝ շուրջ 310 000, որից թանգարաններ է այցելել ավելի քան 150 000, թատրոններ՝ շուրջ 152 000, համերգասրահներ՝ ավելի քան 7 500 աշակերտ, որը 2024 թվականի ցուցանիշը գերազանցել է շուրջ 10 հազարով: 2025թ. շահառուների թիվը 35%-ով գերազանցում է 2023թ. նույն ցուցանիշը, և ընդգրկում է հանրակրթական դպրոցներում սովորողների 73%-ը:

Արվեստի ոլորտում իրականացվել է 21 մանկապատանեկան կրթամշակութային ծրագիր, որոնցում ընդգրկվել է ավելի քան 31 000 մասնակից՝ նախորդ տարիների համեմատ շարունակական աճի արձանագրմամբ. մասնավորապես, ծրագրերի թիվը 2024թ. համեմատ աճել է 3-ով, իսկ մասնակիցների թիվը՝ 49%-ով:

Ներառականության ապահովման շրջանակներում իրականացվել է 7 թիրախային ծրագիր՝ 1 800 շահառուի մասնակցությամբ (30%-ով ավելի նախորդ տարվա համեմատ):

Շարունակվել է դպրոցականների, ուսանողների և երիտասարդների հեղինակային երգի մրցույթ-փառատոնը՝ համապատասխան դրամական պարգևներով (հաղթող մասնակիցները և մանկավարժները՝ 362 500-ական ՀՀ դրամ, ուսումնական հաստատությունները՝ 1.5-ական մլն ՀՀ դրամ):

Գրադարաններում և թանգարաններում իրականացվել է 1 941 կրթամշակութային ծրագիր, որին մասնակցել է 44 640 այցելու, ինչը 14%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

2024-2025թթ. կազմակերպվել են նաև Երվանդ Քոչարի և Պարույր Սևակի, Տիգրան Մանսուրյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Հովհաննես Չեքիջյանի, Դավիթ Ղազարյանի, Սոֆի Դևոյանի, Նորայր Մեհրաբյանի, Արտավազդ Փելեշյանի հոբելյանները: Ավելի քան 24 հոբելյան իրականացվել է Կառավարության աջակցությամբ:

Շարունակվել են մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման աշխատանքները: Բարելավվել է մշակութային ժառանգության բնագավառի իրավապայմանագրային դաշտը, մասնավորապես 2025թ. ընդունվել են 26 ենթաօրենսդրական ակտեր, որոնք ապահովում են 2024թ. ընդունված «Թանգարանների մասին» ՀՀ օրենքի պատշաճ կիրարկումն ու ոլորտի կանոնակարգումը, բարելավվել է «Գրադարանների մասին» ՀՀ օրենքը, ընդունվել են վերջինիս կիրարկումն ապահովող 2 իրավական ակտեր, ընդունվել են «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող 11 իրավական ակտեր:

2025թ. թանգարանների այցելությունների թիվը կազմել է շուրջ 1 մլն 354 հազար, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 9%-ով, իսկ 2021թ. ցուցանիշը՝ 40%-ով:

«Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառումներին միացել է Հայաստանի 108 թանգարան, որոնք սպասարկել են ավելի քան 245 000 այցելու, ինչը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 54%-ով:

4 թանգարան համալրվել է 16 մշակութային արժեքներով, որոնցից առանձնակի կարևորություն ունեն՝ «Սոթբիս» հեղինակավոր աճուրդի տնից գնված աշխարհահռչակ հայ նկարիչ Արշիլ Գորկու «Անվերնագիր» գրաֆիկական աշխատանքը, որը ներառվել է Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում, 12-րդ դարին վերագրվող բացառիկ կարևորության հնագույն գեղարվեստական կոթող հանդիսացող քանդակված եկեղեցու փայտյա դռան փեղկը՝ ձեռքբերված Լոնդոնի գալերեայից, որը կհամալրի Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուն, ինչպես նաև Մատենադարանի համար ձեռք բերված 12-րդ դարի մեծագույն գործիչ Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն յոթ Կաթողիկէ թղթոց» աշխատությունը, որը ձեռք է բերվել Ավստրիական հին և հազվագյուտ գրքերի ու ձեռագրերի INLIBRIS Gilhofer Nfg մասնագիտացված ընկերության կազմակերպած աճուրդից:

Ընդհանուր առմամբ, թանգարանային հավաքածուների համալրման համար պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 332 մլն ՀՀ դրամ, ինչը գրեթե 29 անգամ գերազանցում է նախորդ տարվա 11.5 մլն դրամը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման ուղղությամբ ՀՀ 8 մարզերի 30 համայնքներում իրականացվել են 11 ծրագրեր, այդ թվում՝ Արհեստների միջազգային փառատոնը, որին մասնակցել է 15 000 հոգի: Հատկապես լայն ընդգրկում է ստացել Արհեստների միջազգային փառատոնը, որը մեկնարկել է 2022թ.: Փառատոնն առաջին անգամ կազմակերպվել էր ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, 2-րդը՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում և Վայոց ձորի մարզի Արենի համայնքում, իսկ 2025-ին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում: Նախորդ տարիներին փառատոնի շահառուների թիվը 2 000 – 3 000 էր, 2025թ. թիվը կազմել է 12 000, ինչը փառատոնի ճանաչելիության բարձրացման և հանրության մեջ դրա նկատմամբ հետաքրքրության ավելացման լուրջ ցուցիչ է:

ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի համալրման ուղղությամբ՝ Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» շտեմարանը համալրվել է Հայաստանի համայնքներում կիրառվող ևս 13 ուտեստով, ներկայում շտեմարանում հասանելի են 413 ուտեստից և 470 խաղերից բաղկացած ցանկեր:

Միաժամանակ ազգային ուտեստները ներկայացվում են տարբեր մարդաշատ միջոցառումների ընթացքում՝ նպաստելով դրանց տեսանելիության բարձրացմանը: 2025թ. դեկտեմբերի 25-ից 2026թ. հունվարի 14-ը Երևանում կազմակերպվել է «Տարեհաց» խորագրով ամանորյա տոնավաճառ, որի շրջանակում ներկայացվել է հայկական խոհանոցը՝ որպես ոչ նյութական մշակութային ժառանգության կարևոր դրսևորում: Առաջին անգամ «Տարեհաց» խորագրով ամանորյա տոնավաճառն իրականացվել է 2024թ: 2025թ. տոնավաճառն ընդլայնվել է՝ ընդգրկելով նաև Ժողովրդական արվեստների թանգարանի վարպետներին, Երևանի ու ՀՀ մարզերի քոլեջներին, որոնց սաները ներկայացրել են իրենց պատրաստած ավանդական ուտեստները:

2025 թվականին իրականացվել են՝ 31 *հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ* (23-ը՝ ՀՀ պետական բյուջեից հատկացումներով), որոնցից 8-ի աշխատանքներն ավարտվել են, իսկ 15-ինը շարունակական: Պետություն-մասնավոր համագործակցությամբ վերականգնվել է 8 հուշարձան, որից 1-ի աշխատանքներն ավարտվել են, 7-ն ընթացքում են:

23 հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման նպատակով ՀՀ պետական բյուջեից 2025թ. հատկացվել է 1 մլրդ 386 մլն ՀՀ դրամ, որը 2022թ. նույն ցուցանիշը գերազանցում է 542%-ով, իսկ հուշարձանների թիվն ավելացել է 14-ով:

Կառուցվել է 2 տեղեկատվական զբոսաշրջային կենտրոն (Լոռի Բերդում և Զորաց քարերում), ևս մեկի շինարարության աշխատանքները մոտենում են ավարտին (Բջնի ամրոց):

Հատուկ ուշադրություն է դարձվում որմնանկարների վերականգնմանը. իրականացվել է Շատիվանք վանական համալիրի Սբ Աստվածածին եկեղեցու որմնանկարի գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները և համաձայնեցվել լիազոր մարմնի հետ, Երևան քաղաքի Կառավարության շենքի 3-րդ հարկից գեղանկարիչ Մինաս Ավետիսյանի 2 որմնանկարներ («Հանդիպում» և «Խաչքարի մոտ») տեղափոխվել են Հայաստանի ազգային պատկերասրահի Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում գտնվող «Մինաս Ավետիսյան մասնաճյուղ» թանգարան և տեղում ամրակայվել են:

2018-2025 թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են մոտ 40 վանական համալիրների և եկեղեցիների վերականգնման աշխատանքներ, ևս 25-ի ամրակայման, նորոգման և վերականգնման նպատակով մշակվել են գիտանախագծային փաստաթղթեր: Միայն կրոնական բնույթի հուշարձանների վերականգնման համար այս ընթացքում պետությունը ծախսել է ավելի քան 1.6 մլրդ ՀՀ դրամ:

Որպես պետականության խորհրդանիշներ, 2025թ. շարունակվել են վերականգնվել ոչ միայն բերդերն ու ամրոցները, այլ նաև կամուրջները՝ Շիրակի մարզի Կրասարի կամուրջը (վերականգնման աշխատանքները մեկնարկել են 2025թ.), Տավուշի մարզի Հախումի կամուրջի գիտանախագծային փաստաթղթերը գտնվում են համալիր փորձաքննության փուլում, իսկ Լոռու մարզի Յաղդանի կամուրջի վերականգնման էսքիզը հաստատված է գիտամեթոդական խորհրդի կողմից, նախագծումը նախատեսված է ավարտել 2026թ. հունվար ամսվա վերջին (2026թ. կմեկնարկեն դրանց վերականգնման աշխատանքները), պետություն-մասնավոր համագործակցությամբ ավարտվել են Երևանի «Կարմիր կամուրջ» հուշարձանի վերականգնման աշխատանքները:

Պետական գրանցման նպատակով պատվիրվել են 10 պատմամշակութային օբյեկտների չափագրման աշխատանքներ: Մշակվել և ընդունվել է ««Արտաշատ մայրաքաղաք» հնավայրի պատմական հատվածներից մեկի գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Մեկ այլ կառավարության որոշմամբ «Արտաշատ մայրաքաղաք» պատմամշակութային արգելոցի տարածքը 5.8 հա-ից դարձել է 83.8 հա:

ՀՀ կառավարության որոշմամբ 710 նորահայտ հուշարձան ընդգրկվել է ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

2025թ. հաստատման է ներկայացվել 152 պահպանական գոտիների նախագիծ, որից հաստատվել է 117-ը: Նորահայտ հուշարձանի կարգավիճակ է ստացել 39 պատմամշակութային օբյեկտ, տրամադրվել է 58 պեղման թույլտվություն:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործողների և սեփականատերերի հետ կնքվել է 371 հուշարձանի պահպանական պարտավորագիր:

Շարունակվել են մշակութային հաստատությունների շենքային ու գույքային պայմանների և միջավայրի բարելավման աշխատանքները: 2025թ. էական մեծ ծավալի ներդրումներ են արվել թատերահամերգային հաստատությունների շենքային պայմանների բարելավման, գույքով ու երաժշտական գործիքներով ապահովման համար: Այսպես, ծախսը կազմել է ավելի քան 947 մլն ՀՀ դրամ և վերաբերել է 10 հաստատության (Գ. Սունդուկյանի անվան ազգային թատրոն, Սոս Սարգսյանի անվան «Համազգային» պետական թատրոն, Արամ Խաչատրյանի անվան համերգասրահ, Երևանի կամերային պետական թատրոն, Կամերային երաժշտության ազգային կենտրոն, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն, Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն):

Կապիտալ ներդրումները շարունակվել են նաև մշակութային ժառանգության ոլորտում: Այսպես, 2025թ. կապիտալ ներդրումներ են արվել 19 թանգարաններում՝ շենքային պայմանների բարելավման և գույքով հագեցման համար:

Մշակույթի ապակենտրոնացման, մարզերում մշակութային կյանքի ակտիվացման նպատակով իրականացվել է 14 ծրագիր, որից 7-ը երաժշտական փառատոն՝ ավելի քան 106 300 հանդիսատեսի (որը 20%-ով գերազանցում է նախորդ տարվա մասնակցությունը) և 3 թատերական փառատոն՝ 14 000 հանդիսատեսի ընդգրկմամբ: Հատկապես սպասված են Ֆեստիվառ մշակութային-զբոսաշրջային և Արուճի հոգևոր երաժշտական փառատոները, որոնք դարձել են ժամանցի անցկացման նախընտրելի ձև: 2025թ. Անկախության օրը՝ սեպտեմբերի 21-ը, նշանավորվեց ֆեստիվառ փառատոնով Արմավիրում (շուրջ 20 000 հանդիսատես, 39 տաղավար տնտեսվարողների համար), իսկ 2026թ. Ֆեստիվառ փառատոնը առաջին անգամ անցկացվեց ձմռանը՝ Ջերմուկում՝ ամանորի օրերին (շուրջ 3 000 հանդիսատես):

Մեծ արձագանք է ստացել նաև Գավառում թատերական միամսյակը, որի շրջանակում Գավառի թատրոնում ելույթ են ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող գրեթե բոլոր թատերական կազմակերպությունները:

Շարունակական և նպատակային են դարձել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային կազմակերպությունների մարզային ծրագրերն ու հյուրախաղերը, համերգաշրջանների և թատերաշրջանների բացումը: Բոլոր թատերահամերգային կազմակերպությունների համար ամրագրվել է մարզային գործունեության պարտադիր լինելու պահանջը: 2025թ. 10 մարզում անց է կացվել 20 կազմակերպության ընդհանուր 92 համերգ և ներկայացում, ընդհանուր 71 000 հանդիսատեսի ներգրավմամբ. մասնավորապես՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (ՀԱՖՆ) 12 համերգային ծրագրերը հանրապետության 5 մարզում (Սյունիք, Շիրակ, Լոռի, Կոտայք, Արարատ), Օպերային թատրոնի թատերաշրջանի բացումը Ստեփանավանում, Համազգային թատրոնի և Ստանիսլավսկու թատրոնի հյուրախաղերը, Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի մարզային համերգաշարը (բոլոր մարզերում ընդհանուր 10 համերգ):

Շարունակվել են Թատրոնի միջազգային օրվա և թատերական շաբաթի միջոցառումները, որին միացել են Երևանի և մարզերի բոլոր պետական թատրոնները: Շաբաթվա շրջանակներում նախորդ տարվա նման թատրոններ է այցելել մոտ 5 000 հանդիսատես, դպրոցականների համար կազմակերպվել են վարպետության դասեր, շրջայցեր թատրոններ, հանդիպումներ անվանի և ճանաչված դերասանների ու ռեժիսորների հետ:

Հայ մշակույթի հանրահռչակումը և մշակութային դիվանագիտությունը եղել են ոլորտի քաղաքականությունների առանցքում:

Մշակութային ժառանգության միջազգայնացում

2025թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկվել են 2՝ «Երևանի ուրարտական ժառանգությունը» և «Գառնի հնագիտական համալիրը և «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ» հայտերը: Այս ուղղությամբ աշխատանքները վերսկսել էին 2024 թվականից՝ 29 տարվա ընդմիջումից հետո «Տիրինկատար հնավայրի վիշապաքարերը և մշակութային լանդշաֆտի» հայտի ընդգրկումով նախնական ցանկում, որը հիմնական ցանկում ընդգրկելու ուղղությամբ աշխատանքները շարունակվել են 2025թ:

Պատրաստվել և ՅՈՒՆԵՍԿՕ-ին է ներկայացվել «Տաթևի և Տաթևի Մեծ անապատ վանական համալիրները և Որոտան գետի կիրճը» հուշարձանախմբին ուժեղացված պաշտպանության կարգավիճակի շնորհման հայտադիմումը:

Հայաստանն ընտրվել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կոմիտեի անդամ՝ առաջիկա 4-6 տարվա համար:

Հայաստանը մասնակցել է միջազգային երկու կարևոր ծրագրերի՝ «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը «Ճարտարապետական ժառանգություն» խորագրով՝ ավելի քան 210 միջոցառումով, «Եվրոպական հնագիտության օրերը»՝ շուրջ 10 միջոցառումով:

«Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողներ» միջազգային մրցույթում Հայաստանը հաղթող է ճանաչվել երկրորդ անգամ անընդմեջ. Գյումրին ներկայացնող հաղթող թիմն ուղևորվել է Ստրասբուրգ: «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը ամփոփվել է վերականգնված «Կարմիր կամուրջ» հուշարձանի բացումով, որի վերականգնումն իրականացվել է մասնավորի հետ համագործակցությամբ:

Թանգարանները իրականացրել են շուրջ 18 միջազգային ժամանակավոր ցուցադրություններ, որոնցից առանձնահատուկ նշանակություն ունեն «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ում կազմակերպված «Սրբազան երկխոսություն. Լուվրից Հայաստանի պատմության թանգարան» միջազգային ցուցադրությունը և «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի իրականացրած Հայկական իմպրեսիոնիզմի գույներն ու լույսերը խորագրով ցուցահանդեսը՝ Ֆրանսիայի Բարբիզոնի «L'ESQUISSE» մշակութային կենտրոնում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցությամբ իրականացված «Սարոյանական գույներ. բառերից անդին» միջազգային ցուցահանդեսը՝ նվիրված մեծանուն գրող Վ. Սարոյանի արխիվային հետազոտություններին:

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը իր հավաքածուով մասնակցել է Օմանի ազգային թանգարանում «Խունկի երկիր» խորագրով ժամանակավոր ցուցադրությանը:

«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ն իր հավաքածուով մասնակցել է «Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարան» պետական դաշնային բյուջետային մշակութային հաստատությունում (ՌԴ) «Մարկ Շագալ. նկարիչ Ռուսաստանից» խորագրով ցուցադրությանը:

Հայ-չինական միջթանգարանային համագործակցության շրջանակում Չինաստանի հեղինակավոր թանգարանների հավաքածուների ցուցադրություններ են կազմակերպվել՝ «Հայաստանի պատմության թանգարան», «Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան», «Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան», «Մ. Սարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ներում:

«Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)» ՊՈԱԿ-ն առաջին անգամ ներկայացրել է Հայաստանը Դուբայի «ICOM Museum Fair 2025»-ում «Moment of Art» ծրագրով՝ ցուցադրելով արվեստի և նորաձևության համադրություն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության նախաձեռնությամբ՝ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը Ֆրանսիայի ժառանգության ազգային ինստիտուտի հետ համատեղ իրականացրել է դասընթաց-վարժանքներ՝ Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, Հայաստանի ազգային գրադարանում, որոնց մասնակցել են պետական և համայնքային ենթակայությամբ գործող թանգարանների և գրադարանների աշխատակիցներ (181 մասնագետ):

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ ու Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնության (IFLA) գործակցությամբ Հայկական գրադարանային ասոցիացիան կազմակերպել է «Գրադարանների վերափոխումը դինամիկ համայնքային և մշակութային կենտրոնների» խորագրով վերապատրաստման ծրագիր, որին մասնակցել են գրադարանային ոլորտի 100 մասնագետներ:

2025թ. Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության Մշակույթի աշխատանքային խմբի նախագահությունը և հաստատել է 2025-2027թթ. գործողությունների ծրագիրը:

2025թ. ԵԽ «Մշակութային ուղիներ» ծրագրի կառավարման խորհուրդը հաստատել է ԵԽ «Մշակութային ուղիներ» ծրագրի ընդլայնված մասնակի համաձայնագրի խորհրդատվական 15-րդ ֆորումը և Կառավարման խորհրդի ոչ պաշտոնական նիստը 2026թ. Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու որոշումը:

2025թ. ոչ նյութական մշակութային ժառանգության բնագավառում կարևոր ձեռքբերումներից կարելի է համարել «Մշակույթը հանուն կայուն զարգացման» հասարակական կազմակերպության հավատարմագրումը ՅՈՒՆԵՍԿՕ-ում՝ որպես 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի փորձագիտական կազմակերպություն:

Ժամանակակից արվեստի և ստեղծարար ոլորտի միջազգայնացում

2025թ. հունիսի 18-20-ը Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայացած «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի 10-րդ նստաշրջանում, Հայաստանն ընտրվեց վերոհիշյալ կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի անդամ՝ 2025-2029թթ. համար և վերոնշյալ կոնվենցիան համակարգող բյուրոյի փոխնախագահ՝ ներկայացնելով Արևելաեվրոպական տարածաշրջանային խումբը:

2025թ. նոյեմբերին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո, Հայաստանում կազմակերպվել է «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ» երևանյան միջազգային համաժողովը՝ նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի 20-ամյակին: Համաժողովին մասնակցել են 18 երկիր և 6 միջազգային կազմակերպություն, այդ թվում՝ Ղազախստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Վրաստանի ոլորտային փոխնախարարներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերոնշյալ կոնվենցիան համակարգող քարտուղարը, ԵԽ «Մշակութային ուղիներ» ծրագրի ղեկավարը, ԻՖԱԿԿԱ կազմակերպության ղեկավարը:

Հայ ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի (1876-953թթ.) ծննդյան 150- և Երևանի Հանրապետության հրապարակի շինարարության մեկնարկի (1927թ.) 100-ամյակները ներառվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2026-2027թթ. օրացույցում: Որոշումն ընդունվել է 2025թ. նոյեմբերի 10-ին Սամարղանդում (Ուզբեկստան) ընթացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի 43-րդ նստաշրջանում: Սկսած 1998 թվականից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների օրացույցում ընդգրկվել է Հայաստանի կողմից ներկայացրած 31 հոբելյանական տարեթիվ, այդ թվում՝ Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյանները, հայկական կինոյի 100-ամյակը և այլն:

Վերջին երկու տարիների ընթացքում տարեկան նշվել է 14-18 հոբելյան: 2025թ. հանդիսավորությամբ նշվել է ՀԱՖՆ 100-ամյակը, որի շրջանակներում Հայաստանում ելույթ են ունեցել անվանի նվագախմբեր, դիրիժորներ և մենակատարներ, իսկ ՀԱՖՆ հանդես է եկել Իրանի հինավուրց մայրաքաղաք Պերսեպոլիսում:

Հայաստանում և արտերկրում մեծ հանդիսավորությամբ նշվել է Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակը: Հոբելյանական միջոցառումների կազմակերպման համար հատկացվել է 62,781.7 դրամ, իրականացվել է 11 ծրագիր: Տարին հագեցած էր Ավետիք Իսահակյանին նվիրված բազմաբնույթ նախաձեռնություններով, որոնց արդյունքում մեր և օտար ընթերցողների սեղանին են դրվել նոր հրատարակություններ. ֆրանսերենով և պարսկերենով հրատարակեցինք Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմը, վարպետի սիրային նամակների հիման վրա տպագրվեց «Իմ սե՛ր, Ավետիք» գիրքը, կազմակերպվել է միջազգային գիտաժողով, որի ընթացքում հայ և արտասահմանցի գիտնականները ներկայացրել են մոտ վեց տասնյակ զեկուցումներ: Գիտաժողով է կազմակերպվել նաև Ֆրանսիայի ԻՆԱԼԿՕ համալսարանում: Լայպցիգում և Վենետիկում, այն տներում, որտեղ ապրել է Ավետիք Իսահակյանը, տեղադրվել են հուշատախտակներ: Կազմակերպվել են հոբելյանական համերգներ Երևանում և Գյումրիում:

2025թ. հոբելյանական միջոցառումների շրջանակներում Փարիզի Պոմպիդու կենտրոնում կայացել է ռեժիսոր Հարություն Խաչատրյանի ֆիլմերի հետահայաց ցուցադրություն: Հեղինակի նմանօրինակ հետահայաց ցուցադրություններ կայացան նաև Բեռլինում և Մոսկվայում:

Հայաստանը մասնակցել է Վենետիկի ճարտարապետության 19-րդ միջազգային բիեննալեին, որին ներկայացել է «Միկրոճարտարապետությունը՝ արհեստական բանականության միջոցով. Հուշարձանները ստեղծում են նոր հիշողություններ» նախագծով: Ընդհանուր առմամբ, Հայաստանի տաղավար այցելել է ավելի քան 10 000 մարդ:

2025թ. Հայաստանը որպես պատվո հյուր մասնակցել է Ֆրանսիայի Սենտ Էտիեն քաղաքում անցկացվող «Ռեսուրս(ներ)՝ կանխատեսելով վաղը» խորագրով 13-րդ միջազգային դիզայն բիեննալեին՝ «Ծալք ու ծավալ» ցուցադրությամբ: Ցուցադրությունը ձևավորվել էր ավելի քան 19 հայ ստեղծագործողների (մասնակիցներ՝ Սարգիս Անտոնյան, Շանթ Շարոյան, Մովսէս Տէր Գևորգեան, Դավիթ Քոչունց, Անուշ Ղուկասյան, Արսեն Կարապետյան, Նորո Խաչատրյան, Խորեն Մաթևոսյան, Արմինե և Աշոտ Սնխչյան, Գայանե Սոֆոյան, Արիգա Թորոսյան, Փիրուզա Խալափյան, Սարգիս Անտոնյան) և արվեստի կառույցների (Triniti Studio, TUMO, AHA collective, ICA Yerevan, Berq Studio) աշխատանքների միջոցով:

Ներդրվել է Հայաստանում համաշխարհային գերաստղերի հյուրընկալման ամենամյա ծրագիրը՝ նպատակ ունենալով դիրքավորել Հայաստանը համաշխարհային մշակութային տիրույթում և նպաստել մշակութային տուրիզմի զարգացմանը: Այս շրջանակներում որպես առաջին միջոցառում 2025թ. Հայաստանում կայացել է համաշխարհային աստղ Ջենիֆեր Լոպեսի համերգը, որին մասնակցել է 30 000 հանդիսատես, որից 15 000-ը՝ զբոսաշրջիկ:

Մշտական աջակցություն է ցուցաբերվում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող թատերահամերգային կազմակերպությունների հյուրախաղային գործունեության խթանմանը: Յուրաքանչյուր տարի 21 թատերահամերգային կազմակերպություն հնարավորություն են ստանում համերգներով հանդես գալու 15 երկրում, այդ թվում՝ Գերմանիայուն, Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Ռուսաստանում և Վրաստանում: Առանձնակի ուշադրություն է դարձվում լայն աշխարհագրություն ունեցող հյուրախաղային նախագծերի իրականացմանը: Մասնավորապես՝ Կամերային նվագախմբի հյուրախաղերը ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Կամերային երգչախմբի

համերգները Իտալիայում և Հունաստանում, Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի համերգները Գերմանիայում, Տիկնիկային թատրոնի հյուրախաղերը Չինաստանում և այլն:

Ընդլայնվել է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչների թիվը, որոնք օգտվել են դրամական խրախուսում ստանալու ծրագրից: Ամսական դրամական խրախուսումը տատանվում է 130 000 – 800 000 ՀՀ դրամի միջև: 2025թ. ծրագրի շահառու է դարձել 11 արվեստագետ և 8 կազմակերպություն, որոնք մասնակցել են 22 հեղինակավոր հարթակի և արժանացել մրցանակների՝ հատկացվել է 122 մլն 980 հազար դրամ գումար: 2024 թվականի համեմատ անհատ շահառուների թիվը գրեթե եռապատկվել է, կազմակերպություններինը՝ կրկնապատկվել, կրկնապատկվել է նաև դրամական խրախուսման բյուջեն:

Անհատ ստեղծագործողներին և ինքնազբաղ արվեստագետներին օժանդակելու նպատակով 2025-ին Հայաստանում կազմակերպվել է 161 համերգ՝ 137 անհատ կատարողների մասնակցությամբ: 22 խմբերի և 58 անհատ կատարողների հնարավորություն է ընձեռվել մասնակցելու տարբեր երկրներում անցկացվող միջազգային կարևոր երաժշտական և թատերական փառատոների (Սանկրիզա փառատոն, Պրեմիո մեցենատե փառատոն, Մոն-Լորյե փառատոն, Ավինյոնի, Չեխովի փառատոներ), մրցույթների (Արաբեսկ, Ռիմինիի պարի մրցույթ, Մալթայի երաժշտական մրցույթ, Համբուրգի երաժշտական մրցույթ, Բելգիայի բալետի միջազգային մրցույթ), բիենալեների և վարպետության դասերի մասնակցելու հնարավորություն է ընձեռվել, որոնց համար ՀՀ պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվում է 22.5 մլն ՀՀ դրամ գումար:

Կինոյի ոլորտում ընթացել է ակտիվ օրենսդրական աշխատանք՝ ոլորտը կարգավորելու, համակարգային փոփոխություններ իրականացնելու և արդյունքում միջազգային հարթակում մրցունակ դարձնելու նպատակով: 2023-2025թթ. ընթացքում ընդունվել է 7 ենթաօրենսդրական իրավական ակտ: Շրջանառվել են «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, «Դրամագլխին հատկացումներ կատարելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և «Ազգային ֆիլմերի նախագծերի պետական ֆինանսավորման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման կանոնակարգ»-ը:

Պետական աջակցություն ստացած ֆիլմերը մասնակցել են բազմաթիվ միջազգային հեղինակավոր կինոփառատոների, այդ թվում՝ 2024-2025թթ. 31 ֆիլմ մասնակցել է 207 միջազգային կինոփառատոների և հարթակների՝ շահելով 105 մրցանակ: 2025թ. 15 ֆիլմ մասնակցել է 58 միջազգային կինոփառատոների և հարթակների՝ շահելով 15 մրցանակ: Թամարա Ստեփանյանի «Իմ հայկական ուրվականները» վավերագրական ֆիլմն ընդգրկվել է Բեռլինի միջազգային կինոփառատոնի «Ֆորում» բաժնում, իսկ «Արտոյի Երկիրը» լիամետրաժ խաղարկային ֆիլմը ներկայացվել է Լոկառնոյի 78-րդ միջազգային կինոփառատոնում, որպես բացման ֆիլմ: Նատալյա Միրզոյանի «Ձմեռն անվերջ» կարճամետրաժ անիմացիոն ֆիլմը ընդգրկվել է Կաննի 78-րդ միջազգային կինոփառատոնի (FIAPF-ի որակավորում ունեցող) «La Cinef» ծրագրում և արժանացել է երրորդ մրցանակի, Սարաևոյի կինոփառատոնի մրցութային ծրագրում և արժանացել «Լավագույն կարճամետրաժ ֆիլմ» մրցանակի, Թեհրանի միջազգային կարճամետրաժ ֆիլմերի

կինոփառատոնի մրցութային ծրագրում և արժանացել «Լավագույն անիմացիոն ֆիլմ» մրցանակի:

Իրականացվել է Երևանյան Գրքի միջազգային փառատոնը, որը 2025թ. կազմակերպվել է նաև արտագնա՝ Գյումրիում և Կապանում: Փառատոնին մասնակցել է շուրջ 60 հրատարակչություն, գրավաճառ և մշակութային կազմակերպություն (նախորդ տարվա 50-ի փոխարեն), որից 10-ը՝ արտերկրից: Իրականացվել են 50-ից ավելի միջոցառումներ (27 փոխարեն), որոնց մասնակցել են 200-ից ավելի գրողներ, թարգմանիչներ, քննադատներ: Փառատոնն ունեցել է 40.000-ից ավելի այցելու (2024թ. 30.000-ի փոխարեն և կրկնակի ավելի 2023 թվականից): Երեք օրերի ընթացքում վաճառվել է 18.000 գիրք (2024թ.՝ 12.000-ի փոխարեն՝ 33%-ով ավելի): Կազմակերպվել է նաև Հանրապետական գրական մրցույթ, որին մասնակցել է 361 գրող, իսկ Սարոյանի անվան միջազգային մրցույթին՝ 108 գրող 25 երկրից: Փառատոնին մասնակցել են անվանի գրողներ, գործակալներ և հրատարակիչներ Միացյալ Թագավորությունից, Իտալիայից, Լատվիայից, Վրաստանից, Ռուսաստանից, Չեխիայից, Հունաստանից, Նիդերլանդներից, Իրանից, Միացյալ Նահանգներից:

Աջակցություն է տրամադրվել 10 լեզվով 20 գրքի թարգմանությանը՝ նախորդ տարվա 9 լեզվով 17 գրքի փոխարեն:

Հայ-չինական գրական թարգմանական նախագծի շրջանակում 2021 թվականից մեկնարկել է 25 հայ և չին գրականության դասական և կարևոր հեղինակների փոխադարձ թարգմանության ծրագիրը, որի շրջանակում մինչ օրս հրատարակվել է 18 գիրք, որից 10-ը հայ հեղինակների: Վերոնշյալ գրքերը ներկայացվել են Պեկինի գրքի միջազգային ցուցահանդեսում:

Եվրոպական միության հետ մշակույթի ոլորտում «Ստեղծագործ Եվրոպա» համագործակցային ծրագրի շրջանակներում 2024թ. Հայաստանից հաստատվել է 5 համագործակցային հայտ, շուրջ 250.000 եվրո ընդհանուր բյուջեով՝ նախորդ տարվա 150.000 եվրոյի համեմատ: 2025թ. Հայաստանից ներկայացվել է 34 գործընկերային հայտ և 6 հայտ, որտեղ Հայաստանը համակարգող է: Արդյունքները կհրապարակվեն 2026-ին: Միաժամանակ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության փորձագիտական աջակցությամբ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ Ստեղծագործ Եվրոպա ծրագրի մեդիա բաղադրիչին միանալու համար:

«Հայաստան-Եվրոպական միություն կրթության երկխոսության» հարթակի համանմանությամբ 2025 թվականին մեկնարկել է Հայաստան-ԵՄ մշակույթի ոլորտում երկխոսությունը՝ ի դեմս ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից մշակույթի ոլորտում «Հայաստան-ԵՄ. մշակութային կապերի ամրապնդում» խորագրով աշխատաժողովի: Հայաստանում 2025թ. ապրիլին անցկացվել են Ղազախստանի, իսկ հունիսին՝ Վրաստանի մշակույթի օրերը: Սեպտեմբերի ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի Իրանի Իսլամական Հանրապետություն այցի շրջանակում՝ Պերսեպոլիսի պատմական հուշարձան-համալիրի տարածքում տեղի է ունեցել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի բացօթյա համերգը: Հոբելյանական համերգը՝ նվիրված էր Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադրման 100-ամյակին: Նոյեմբերին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի է ունեցել Մեսրոպ Մաշտոցի անվան փողոցի բացումը:

Միջազգային կառույցների ու գործընկերների հետ համագործակցության շրջանակներում նաև՝

2025թ. ընթացքում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդական քաղաքականության ոլորտներում ստորագրվել են 20 երկկողմ և բազմակողմ փաստաթղթեր այլ պետությունների ու միջազգային կառույցների հետ: Համեմատության համար նշենք, որ 2024թ. համանուն ցուցանիշը կազմել է՝ 17, 2023թ.՝ 14, 2022 թ.՝ 13, 2021թ.՝ 14:

2025թ. ՀՀ պետական բյուջեից հատկացումներ են ուղղվել 8 միջազգային կազմակերպություններին անդամակցությանը՝ «Եվրոպա Նոստրա», «Հորիզոն Եվրոպա», «Ստեղծագործ Եվրոպա», Եվրիմաժ, ԵԽ աուդիովիզուալ օբսերվատորիա, ԵԽ Սպորտի ընդլայնված մասնակի համաձայնագիր (EPAS), ԵԽ երիտասարդական քարտ, Համաշխարհային հակադոպինգային գործակալություն (Wada):

2025թ. տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ մարդկանց միջև շփումների 11-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել և պատրաստվել են գործառնական եզրակացությունները:

Հայաստանում ԵՄ պատվիրակության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ անցկացվել են Հայաստան-ԵՄ կրթական երկխոսությանը միտված երկու համաժողովներ՝ կրթության ոլորտում հիմնական միջազգային դերակատարների մասնակցությամբ:

2025թ. տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ համակազմակերպման ձևաչափով՝ «Մշակույթի հարցերով քաղաքականության շուրջ» խորագրով առաջին աշխատաժողովը:

Ղարաբաղից բռնի տեղահանվածներին աջակցություն

Կառավարությունը շարունակել է Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կրթության հասանելիության ապահովման միջոցառումները: 2023 թվականի հոկտեմբեր ամսից սկսած՝ իրենց նախընտրած բնակավայրերում շարունակում է հանրակրթական ծառայություններ ստանալ բռնի տեղահանված շուրջ 15 320 երեխա:

Բռնի տեղահանված ուսանողների մասնագիտական և բարձրագույն կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով դեռևս 2023 թվականի հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին Կառավարությունը հաստատել էր բուհերում և քոլեջներում բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կարգը:

2024 թվականի սեպտեմբերին կատարված փոփոխություններով սահմանվել էր, որ բռնի տեղահանված ուսանողները կշարունակեն ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակներ ստանալ մինչև տվյալ կրթական աստիճանով իրենց ուսումնառության ավարտը որոշմամբ սահմանված առաջադիմության շեմն ապահովելու պարագայում:

Միևնույն ժամանակ ուսման վարձի փոխհատուցման աջակցություն սահմանվեց նաև պետական քոլեջներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում առաջին կուրս

ընդունված՝ բռնի տեղահանված ուսանողների համար: Հաշվետու տարում այս աջակցության ծրագրի շահառու են եղել քոլեջների 456 (որից՝ առաջին կուրս ընդունված 187) և բուհերի 2761 (որից՝ առաջին կուրս ընդունված 229) ուսանողներ:

2025 թվականի ՀՀ պետական բյուջեից մասնագիտական կրթության սովորողների ուսման վարձավճարների փոխհատուցման համար հատկացվել է շուրջ 1 մլրդ 36 մլն դրամ:

2024 թվականին Կառավարությունը փոփոխություններ է կատարել 2023 թվականի՝ Ղարաբաղից բռնի տեղահանած ուսուցիչների օժանդակության ծրագրում՝ առկա թափուր հաստիքները համալրելու հնարավորություն տալով նաև 2020 թվականին Ղարաբաղից տեղահանված ուսուցիչներին: Այս ծրագրի շրջանակում մարզերի դպրոցներում աշխատանքի անցնելիս Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչները 2 տարի շարունակ ստանալու են 30% հավելավճար, Սյունիքի, Վայոց ձորի հանրակրթական ուսումնական հաստատություններում, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի որոշ համայնքներում աշխատանքի անցնելու դեպքում՝ նաև 50 000 ՀՀ դրամ լրավճար: Ծրագրի մեկնարկից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը ՀՀ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններ գործուղվել է 438 ուսուցիչ, որոնց լրավճարի տրամադրման գումարի չափը հաշվետու տարում կազմել է 203 մլն ՀՀ դրամ (2024 թվականին՝ 163 մլն դրամ): 2025 թվականի սեպտեմբերի դրությամբ ՀՀ մարզեր գործուղված ուսուցիչների թիվը նվազել է՝ կազմելով 122, ինչը պայմանավորված է աշխատանքային պայմանագրերի ավարտով: Ընդհանուր առմամբ, ծրագրի մեկնարկից մինչ այժմ ՀՀ հանրակրթական դպրոցներում աշխատանքի է անցել բռնի տեղահանված շուրջ 600 ուսուցիչ: